

Սուրեն Իսկանդարյան
Սվետլանա Իսկանդարյան

ՏԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՅՈՒՄ ՏԵՔՍԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Լուսինա 14 կմ
Կարեն 7 կմ 20 րոպե
Ընդամենը 7 կմ

Լուսինա
1) $25 - 5 = 7$ (կմ)
2) $7 - 3 = 21$ (րոպե)
3) $25 - 21 = 4$ (րոպե)
Պատ. 14 րոպեով

$$\frac{a}{100} \cdot p = b$$
$$a = \frac{b \cdot 100}{p}$$

ԱՐՑԱՆԻ ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱՍԱՐԱՆ

**Երաշխավորված է տպագրության
և, Արվյանի անվան ՀՊԱ և Արցախի Մերուպ Մաշտոց
համալսարանների գիտական խորհուրդների կողմից**

**Հրատարակության հովանավոր՝
Արցախի Մերուպ Մաշտոց համալսարան**

357 373 372.8.51
907 74 262
Ի 800

Իվանդարյան Աուրեն, Իվանդարյան Սվետլանա
Ցարական դպրոցում տեղապահ խնդիրների ուսուցումը:
Ուսումնառության մեծարկ. – Եր., Զանգակ-97, 2010. – 164 էջ:

Երկրորդ լրանված կրատարակություն

Աշխատությունը նվիրված է տարրական դասարաններում մաթե-
մատիկայի ծրագրի առանցքային հարցերից մեկին՝ խնդիրների ուսուց-
մանը: Այն նախատեսված է դասիստներ և արտաստուղ քուիերի,
քոլեջների ուսանողների և դասվանների համար:

907 74 262

ISBN 978-99941-1-513-6

© Ա.Ա. Իվանդարյան, Ա.Ա. Իվանդարյան, 2010 թ.
© «Զանգակ-97» հրատարակչություն, 2010 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

X Կրտսեր դպրոցի առկա որոշ
աշակերտներին տվյալները
խնդիրներ, ապիսեք անախտ
խանց տպու համար պետք է ն
թյուն կամ գործողություններ:

«խնդիր» հասկացությունը
Մարդկանց ամենօրյա գործուն
խնդիր լուծման հետ: Մասնա
սուցման գործընթացում ընդգծ
յին խնդիրների լուծմանը: Խնդիր

1. ուսուցումը կապվում է կր
2. մեկնաբանվում են բնաբ
- ա) իմաստները,
- բ) միջև գոյություն ունեցող ն
- գ) որոշ օրենքների իմաստն
- դ) քաղաղիչների և արդյուն

անքո
3. զարգացվում է աշակերտ
մական մտածողությունը:

4. աշակերտների մեջ մնա
կան յեզվով արտահայտելու և գ

5. հարստացվում է կրտսեր

6. աշակերտների մեջ մնա
գծեր, ինչպիսին են համատար

7. աշակերտների մեջ առաջ
քի փոքրահասակների մեծա
մանք և այլն:

Չմայած կրտսեր դպրոցի մ
տեղ է հատկացվում տեղապա
այդ հարցում ուսուցիչը քանակ
ներն համախալի են առաջադ
խնդիրների լուծման մեթոդաբ
ներին հուզող շատ հարցերի ա
թյունում:

X

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վրտսեր դպրոցի աջև դրված հիմնական խնդիրներից մեկն է աշակերտներին սովորեցնել լուծել տեքստային քվաքանական խնդիրներ, այսինքն այնպիսի խնդիրներ, որոնց հարցի պատասխանը տալու համար պետք է կատարել քվաքանական գործողություն կամ գործողություններ:

«Ճնդիր» հասկացությունը լայն գիտական հասկացություն է: Մարդկանց ամենօրյա գործունեությունը կապված է այս կամ այն խնդրի լուծման հետ: Մաթեմատիկայի տարրական դասընթացի ուսուցման գործընթացում ընդգծված տեղ է հատկացվում տեքստային խնդիրների լուծմանը: Խնդիրների միջոցով՝

1. ուսուցումը կապվում է կյանքի հետ.

2. մեկնաբանվում են քվաքանական գործողությունների

ա) իմաստները.

բ) միջև գոյություն ունեցող կապերը.

գ) որոշ օրենքների իմաստները.

դ) բաղադրիչների և արդյունքների միջև գոյություն ունեցող կապերը.

3. զարգացվում է աշակերտների տրամաբանական և ալգորիթմական մտածողությունը.

4. աշակերտների մեջ ձևավորվում է մտքերը մաթեմատիկական լեզվով արտահայտելու և գրառելու կարողություններ.

5. հարստացվում է կրտսեր դպրոցականների բառապաշարը.

6. աշակերտների մեջ ձևավորվում են քննադրության այնպիսի գծեր, ինչպիսին են համատությունը, կամքը, ուշադրությունը և այլն.

7. աշակերտների մեջ աստիճանում է սեր և հարգանք հայրենիքի, փոքրահասակների, մեծահասակների, աշխատանքի նկատմամբ և այլն:

Չնայած կրտսեր դպրոցի մաթեմատիկայի դասընթացում մեծ տեղ է հատկացվում տեքստային խնդիրների լուծմանը, սակայն այդ հարցում ուսուցիչը ցանկալի արդյունքի չի հասնում: Դասվարներն հաճախակի են ասաջարտում հարցեր կապված տեքստային խնդիրների լուծման մեթոդիկայի հետ: Սենք ձգտել ենք դասվարներին հուզող շատ հարցերի պատասխանը տալ սույն աշխատությունում:

Գլուխ I

§1. Գաղափար «խնդիր» հասկացության մասին

Տարրական դասարաններում տեքստային խնդիրների լուծումը կարելի է դիտել որպես ուսուցման և միջոց և մեթոդ, որոնց կիրառման արդյունքում յուրացվում է մաթեմատիկայի տարրական դասընթացի բովանդակությունը:

«խնդիր» հասկացությունը կիրառվում է գիտության տարրեր բնագավառներում: Միայն հոգեբանությունում և մեթոդիկայում է փորձեր կատարվում մեկնաբանելու, քե ինչ է իրենից ներկայացնում խնդիրը: Ինչպես գրում է Ն.Վ. Մետելսկին [5], «խնդիրը յատկանշվող հասկացություն է, և ամենապահ իմաստով դա այն է, ինչ պահանջում է կատարել, լուծել»:

Հոգեբանությունում «խնդիր» հասկացությունը դիտարկվում է երկակի իմաստով, տրամաբանական և հոգեբանական: Տրամաբանական իմաստով խնդիրը մի տեքստ է կամ որևէ իրադրության ասկայություն է, որը պարունակում է ինչ-որ օբյեկտների մասին որոշակի ինֆորմացիա և պահանջ՝ դրանց մասին նոր տեղեկություններ իմանալ կամ բնութագրել դրանց կառուցման եղանակներն հինք ընդունելով խնդրի պայմանում դրանց մասին տրված հատկանիշները: խնդրի պահանջը հաճախ ձևակերպվում է հարցական նախադասության տեսքով:

Հայտնի հոգեբան Ա. Ֆ. Էսաուլովը իր [18] աշխատությունում չեչտակցորեն հարց է դրել, քե «ի՞նչ է խնդիրը» և ցանկացել է առաջադրված հարցին տալ կոնկրետ պատասխան, բայց դա տեղի չի ունեցել: Հեղինակն փորձել է տալ այդ հասկացության հոգեբանական հիմնավորումը, մեկնաբանությունը: Հեղինակը տալիս է «խնդիր» հասկացության ընդհանուր բնութագիրը նշելով, որ եք կա պարման և պահանջ, ապա դա խնդիր է: խնդիրն առանց պահանջի, հարցի չի լինում:

Փաստորեն հոգեբանական իմաստով խնդիրը կոնկրետ մարդու համար միայն այն տեքստն է կամ իրադրությունը, որը պարունա-

կում է որևէ պահանջ, որի կատարումն յն: Եքն առաջադրված տի, ապա դա խնդիր չի համարվում և պահանջը: Լուծել խնդիրը, կա քաղրված հարցին:

Ա. Ֆ. Էսաուլովը նշում է, որ «գիտության տարրեր բնագավառ քանցելի չի ասիմանալել: «Անտրո կարելի է հանդիսել խնդիրներից և գիտական, արտադրական, կոնցր թի»,- նշում է նա:

Ա. Հ. Քարտաշյանը իր [23] աշ քությունից առանձնացնում է «տե րունց և ձևակերպում է հետևյալ խնդիր է կոչվում որևէ մեծության տրված են որոշ մեծությունների քանակադ մեծությունների կամ մեծ ասնյության մեք»:

Մ. Ի. Մորոն և Ա. Մ. Տեչելազով իր խնդիրը բաժնով ձևակերպվ տրվում է քվարանական գրոմորո:

Ի. Վ. Շաղրինան [16]-ում քվա նացնում է տեքստային խնդրունել այն խնդիրներն են, որոնցում տա դած ասնյությունները ձևակերպել պետք է որոշել, քե որ քվերի հեռ ինքնականությանը պետք է կատար նելու համար:

Ա. Վ. Բելոչիստայան իր [3] աշխ մատիկայի տարրական դասընթա տան ինչ պետք է հասկանալ հա կված է ինչ-որ կեծցադպին իրադրու դադրիլնեով: Ըստ նրա՝ խնդիր տե քեայ իրականության բառարն մուք:

Ն. Թ. Իստոմիրան իր [4] աշխա մատիկայի տարրական դասընթա

ություն

ների լուծումը
որոնց կիրառ-
արական դա-

ության տարբեր
տողիկայում է
նրկայաց-
նդիրը չսահ-
այն է, ինչ

տարվում է
Տրամաբա-
րադրության
մասին ո-
տեղելու-
ղանակներն
ված հատ-
արցական

ությունում
վացել է ա-
նց դա տեղի
ան հոգեբա-
նը տալիս է
նով, որ եթե
առանց պա-

տեղ մարդու
պարունա-

կում է որևէ պահանջ, որի կատարման եղանակը, մեթոդը նրան հայտնի չեն: Եթե առաջադրված պահանջի պատասխանը նա գիտի, ապա դա խնդիր չի համարվում, չնայած ասկա են և՛ պայմանը, և՛ պահանջը: Լուծել խնդիրը, նշանակում է պատասխանել առաջադրված հարցին:

Ա. Ֆ. Էսաուլովը նշում է, որ «խնդիր» հասկացությունը, չնայած գիտության տարբեր բնագավառների մասնագետների ներդրած ջանքերի, չի սահմանվել: «Մեթոդական գրականությունում հաճախ կարելի է հանդիպել խնդիրները տարբեր տիպերի, ուսումնական, գիտական, արտադրական, կենցաղային և այլն, բաժանելու փորձե-րի»,- նշում է նա:

Ա. Հ. Քարտաշյանը իր [23] աշխատությունում «խնդիր» հասկացությունից առանձնացնում է «թվաբանական խնդիր» հասկացությունը և ձևակերպում է հետևյալ սահմանումը. «Թվաբանական խնդիր է կոչվում որևէ մեծության արժեքը գտնելու պահանջը, երբ տրված են որոշ մեծությունների թվային արժեքները, որոնք իրար և անհայտ մեծությունների կամ մեծության հետ գտնվում են որոշակի առնչության մեջ»:

Մ. Ի. Մորոն և Ա. Մ. Պիշկալոն [7] աշխատությունում նշում են, որ խնդիրը բաժերով ձևակերպված հարց է, որի պատասխանը տրվում է թվաբանական գործողություններ կատարելու միջոցով:

Ի. Կ. Շադրինան [16]-ում թվաբանական խնդիրներից առանձնացնում է տեքստային խնդիրները և մեկնաբանում, որ դրանք այն խնդիրներն են, որոնցում տվյալների և անհայտների միջև եղած առնչությունները ձևակերպված են բաժերով, որից ելնելով պետք է որոշել, թե որ թվերի հետ ինչ գործողություններ և ինչ հերթականությամբ պետք է կատարել խնդրի հարցին պատասխանելու համար:

Ա. Կ. Բելոշիստայան իր [3] աշխատությունում նշում է, թե մաթեմատիկայի տարրական դասընթացում «խնդիր» հասկացության տակ ինչ պետք է հասկանալ, հատուկ տեքստ, որում նկարագրված է ինչ-որ կենցաղային իրադրություն՝ բնութագրված թվային բաղադրիչներով: Ըստ նրա՝ խնդրի տեքստը կարելի է դիտել որպես թեպ իրականության բառային մոդել:

Ն. Բ. Իստոմինան իր [4] աշխատությունում նշում է, որ մաթեմատիկայի տարրական դասընթացում «խնդիր» հասկացություն

օգտագործվում է այն ժամանակ, երբ խոսքը բնականաբար խնդրի մասին է: Դրանք ձևակերպվում են տեքստի տեսքով, որոնցում արտահայտվում են իրական օբյեկտների միջև գոյություն ունեցող քանակական հարաբերությունները:

Լ. Պ. Ստոլյովան իր [14] աշխատությունում նշում է, որ մաթեմատիկայի տարրական դասընթացում ուսուցվում են բնական խնդիրներ, որոնք ձևակերպված են որևէ լեզվով, որոնցում բնութագրվում են ինչ-որ երևույթների, դեպքերի քանակական կողմը և պահանջվում է գտնել ինչ-որ մեծության անհայտ արժեքը:

Տեքստային խնդիրները բաղկացած են պայմանից և պահանջից. պայմանում տրված են լինում որոշ մեծությունների բնական արժեքները, դրանց կապն ինչպես իրար, անյապես էլ անհայտ մեծության հետ: Այդ կապերից ելնելով՝ որոշվում է, թե ինչ գործողությունների միջոցով պետք է գտնել անհայտ մեծության բնական արժեքը: Խնդրի պահանջը հենց առաջադրված հարցն (կամ հարցերն) է: Խնդրի պայմանի և պահանջի կապերի համակարգն անվանում են ասույթային մոդել: Խնդրի կառուցվածքը պարզելու համար նախատեղի հարմար է կառուցել նրա ասույթային մոդելը:

Տեքստային խնդիրն իրենից ներկայացնում է որևէ իրական իրադրության բառային մոդելը: Որպեսզի այն լուծվի, պետք է կառուցել դրա մաթեմատիկական մոդելը՝ պայմանաճանաչների օգնությամբ:

§ 2. Տարրական դասարաններում ուսուցվող պարզ խնդիրների համակարգը

Վերջին տարիներին որոշ մաթեմատիկոս-մեթոդիստների կողմից այն միտքն է արտահայտվում, որ մաթեմատիկայի տարրական դասընթացում ընդգրկված խնդիրների դասակարգումն ըստ տիպերի ցանկայի չէ: Կարևորն այն է, որ երեխաները կարողանան լուծել ծրագրով նախատեսված խնդիրները [3]: Սակայն մենք պետք է գիտակցենք, որ այդպիսի դասակարգումը ոչ թե աշակերտների, այլ մաթեմատիկա դասավանդող ուսուցիչների համար է

կատարվում: Ուսումնասիրելով [2, 4, 7, 8, 11] մեծապիսեղ ի տվածը, ըստ որանց է պատճառը:

Տարրական դասարանում ստանդարտ խնդիրների լուծմանը: Օրինակ՝ լուծելու է պահանջվում է անհայտ կատարվում է մեծ գ

Օրինակ՝ Լուսինեն ունի Քանի՞ խաղալիք ունի Լուսին

Բաղադրյալ են կոչվում լուծվում են մեկից ավելի գ

Օրինակ՝ Դավիթն ունի Քանի՞ մատիտ ունեն նրան Լուսին

Տարրական դասարանում խնդիրները կարելի է դաս տակների հաշվի ասելով և

1 խումբ - Որոնք լուծեն նական գործողությունների |

1. Գումարման գործողություն (կամ գումարը գտնելու վեր

Օրինակ՝ Դավիթն ունի սինեն: Քանի՞ մատիտ ունեն Լուսին

2. Հանման գործողություն (մնացորդը գտնելու վերաբ

Օրինակ՝ Լիլիթն իր ունեի խնձոր մնաց Լիլիթի մոտ:

բարանական
տեսքով, ո-
գրություն

և, որ մա-
ն են բվարա-
վով, որոն-
րանակա-
անհայտ

և պահան-
նի բվային
անհայտ մե-
գործողու-
ան բվային
կամ հար-
արգն ան-
տղելու հա-
նդից:

որական ի-
նոնք է կա-
անների օգ-

աուցվող

ը

անների կող-
արա-
ունն ըստ
ողանան
ենն
անկերու-
ամար է

կատարվում: Ուսումնասիրելով հրապարակում եղած մեթոդական [2,4,7,8,11] մեծարկները՝ նկատում ենք, որ պարզ խնդիրների դասակարգումն, ըստ դրանց կիրառման նպատակների, ունի վաղեմի պատմություն:

Տարրական դասարաններում ուսուցվող խնդիրները կարելի է տրոհել առանձին խմբերի կամ դասերի՝ հիմք ընդունելով տարբեր չափանիշներ: Ըստ կատարվող գործողությունների քանակի՝ խնդիրները կարելի է բաժանել երկու խմբի՝ պարզ և բաղադրյալ: Պարզ են կոչվում այն քվարանական խնդիրները, որոնց լուծման համար կատարվում է մեկ գործողություն:

Օրինակ՝ Լուսինեն ունի 7 խաղալիք, իսկ Լիլիթը՝ 2-ով ավելի: Բանի՞ խաղալիք ունի Լիլիթը:

$$\text{Լուծում՝ } 7 + 2 = 9 \text{ (խ.)}$$

Պատ.՝ 9 խաղալիք:

Բաղադրյալ են կոչվում այն քվարանական խնդիրները, որոնք լուծվում են մեկից ավելի գործողություն կատարելով:

Օրինակ՝ Դավիթն ունի 5 մատիտ, իսկ Լուսինեն՝ 3-ով ավելի: Բանի՞ մատիտ ունեն նրանց միասին:

$$\text{Լուծում՝ } 1) 5 + 3 = 8 \text{ (մ.)}$$

$$2) 5 + 8 = 13 \text{ (մ.)}$$

Պատ.՝ 13 մատիտ:

Տարրական դասարաններում ուսուցվող տեքստային պարզ խնդիրները կարելի է դասակարգել ըստ դրանց կիրառման նպատակների հաշվի առնելով նաև դրանց քվանտիկությունը:

1 խումբ - Որոնք լուծման միջոցով մեկնաբանվում են քվարանական գործողությունների իմաստները:

1. Գումարման գործողության իմաստը մեկնաբանող խնդիրներ (կամ գումարը գտնելու վերաբերյալ խնդիրներ):

Օրինակ՝ Դավիթն ունի 5 մատիտ: Լրան 3 մատիտ տվեց Լուսինե: Բանի՞ մատիտ ունեցավ Դավիթը:

$$\text{Լուծում՝ } 5+3=8 \text{ (մ.)}$$

Պատ.՝ 8 մատիտ:

2. Հանման գործողության իմաստը մեկնաբանող խնդիրներ (մնացորդը գտնելու վերաբերյալ խնդիրներ):

Օրինակ՝ Լիլիթն իր ունեցած 7 խնձորից 3-ը տվեց ջրոջը: Բանի՞ խնձոր մնաց Լիլիթի մոտ:

Լուծում՝ $7 - 3 = 4$ (խ.)

Պատ.՝ 4 խնձոր:

3. Բազմապատկման գործողության իմաստը մեկնաբանող խնդիրներ (հավասար գումարելիների գումարը գտնելու կամ արտադրյալը գտնելու վերաբերյալ):

Օրինակ՝ Դավիթին 2 կոնֆետ տվեց մայրը, 2-ը՝ տատիկը, 2-ը՝ պապիկը: Քանի՞ կոնֆետ ունեցավ Դավիթը:

Լուծում՝ $2+2+2=6=3 \cdot 2=6$ (կ.) կամ $2 \cdot 3=6$ (կ.)

Պատ.՝ 6 կոնֆետ:

4. Բաժանման գործողության իմաստը մեկնաբանող խնդիրներ.

ա) խնդիրներ հավասար մասերի բաժանելու վերաբերյալ.

Օրինակ՝ Ուսուցիչը 8 տետրը հավասարապես բաժանեց 2 աշակերտի: Քանի՞ տետր ստացավ աշակերտներից յուրաքանչյուրը:

Լուծում՝ $8 : 2 = 4$ (տ.)

Պատ.՝ 4 տետր:

բ) խնդիրներ բովանդակության բաժանման վերաբերյալ.

Օրինակ՝ Ուսուցիչը 8 տետրը հավասարապես բաժանեց մի քանի աշակերտի, որոնցից յուրաքանչյուրը ստացավ 4 տետր: Քանի՞ աշակերտ տետր ստացավ:

Լուծում՝ $8 : 4 = 2$ (աշ.)

Պատ.՝ 2 աշակերտ:

II խումբ - Թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքների միջև գոյություն ունեցող կապերի մեկնաբանման վերաբերյալ խնդիրներ:

1. Հայտնի գումարելիի և գումարի միջոցով անհայտ գումարելին գտնելու վերաբերյալ խնդիրներ.

Օրինակ ա) Լուսինեն և Լիլիթը միասին ունեն 8 նամականիշ: Լուսինեն ունի 5 նամականիշ: Քանի՞ նամականիշ ունի Լիլիթը: ($5 + \square = 8$; $8 - 5 = 3$)

բ) Դավիթն ու Սուրենը տնկեցին 9 ծառ: Սուրենը տնկեց 6 ծառ: Քանի՞ ծառ տնկեց Դավիթը: ($\square + 6 = 9$; $9 - 6 = 3$)

2. Հանման գործողության անհայտ բաղադրիչը գտնելու վերաբերյալ խնդիրներ.

ա) Անհայտ նվազելիի գտնելը հայտնի հանելիի և տարբերության միջոցով.

Օրինակ՝ Լուսինե
որից հետո նրա մո
($\square - 3 = 5$; $5 + 3 = 8$)

բ) Անհայտ հա
քան միջոցով.

Օրինակ՝ Արամ
մենին, որից հետո
տվեց Արմենին: (7

3. խնդիրներ հ
այտ արտադրիչ

Օրինակ՝ ա) Լ
ստացա 24: Ի՞նչ 1

բ) 5-ը բազմա
Ի՞նչ թիվ էի պահ

4. Բաժանմա
րաբերյալ խնդիր

ա) Անհայտ բ
և քանորդը.

Օրինակ՝ Խա
խմբի, յուրաքանչ
էր մասնակցում է

բ) Անհայտ բ
նորդի միջոցով.

Օրինակ՝ Ու
քանի աշակերտ
նի՞ աշակերտ տ

III խումբ - և
հասկացության

1. Երկու թվ
րի տարբերուք

Օրինակ՝ Դ
նույն գիրքը կս
ծախսել Դավիթ

րել հարց. քան
գիրքը կարդայ

Օրինակ՝ Լուսինեն իր ունեցած տետրերից 3-ը տվեց Կարինեին, որից հետո նրա մոտ մնաց 5 տետր: Քանի՞ տետր ուներ Լուսինեն: ($\square - 3 = 5$; $5 + 3 = 8$)

բ) Անհայտ հանելիի գտնելը հայտնի նվազելիի և տարբերության միջոցով.

Օրինակ՝ Արամն իր ունեցած 7 ընկույզից մի քանիսը տվեց Արմենին, որից հետո նրա մոտ մնաց 4 ընկույզ: Քանի՞ ընկույզ Արամը տվեց Արմենին: ($7 - \square = 4$; $7 - 4 = 3$)

3. Խնդիրներ հայտնի արտադրյալի և արտադրյալի միջոցով անհայտ արտադրիչը գտնելու վերաբերյալ.

Օրինակ՝ ա) Մտքումս պահած թիվը բազմապատկելով 6-ով ստացա 24: Ի՞նչ թիվ էի պահել մտքումս: ($\square \cdot 6 = 24$; $24 : 6 = 4$)

բ) 5-ը բազմապատկելով մտքումս պահած թիվով՝ ստացա 35: Ի՞նչ թիվ էի պահել մտքումս: ($5 \cdot \square = 35$; $35 : 5 = 7$)

4. Բաժանման գործողության անհայտ բաղադրիչը գտնելու վերաբերյալ խնդիրներ.

ա) Անհայտ բաժանելիի գտնելը, երբ հայտնի են բաժանարարը և քանորդը.

Օրինակ՝ Խաղին մասնակցող աշակերտները բաժանվեցին 3 խմբի, յուրաքանչյուրում 4 աշակերտ: Ընդամենը քանի՞ աշակերտ էր մասնակցում խաղին: ($\square : 3 = 4$; $4 \cdot 3 = 12$)

բ) Անհայտ բաժանարարի գտնելը հայտնի բաժանելիի և քանորդի միջոցով.

Օրինակ՝ Ուսուցիչը 12 տետրը հավասարապես բաժանեց մի քանի աշակերտի, որոնցից յուրաքանչյուրը ստացավ 2 տետր: Քանի՞ աշակերտ տետր ստացավ: ($12 : \square = 2$; $12 : 2 = 6$)

III խումբ - Խնդիրներ, որոնք առնչվում են «տարբերություն» հասկացության հետ:

1. Երկու թվերի տարբերական համեմատման (կամ երկու թվերի տարբերությունը գտնելու վերաբերյալ խնդիրներ).

Օրինակ՝ Դավիթը զիրքը կարդացել է 9 օրում, իսկ Լուսինեն նույն զիրքը կարդացել է 7 օրում: Քանի՞ օր ավելի ժամանակ է ծախսել Դավիթն այդ զիրքը կարդալու համար (կարելի է ասացարիով հարց. քանի՞ օր պետքս ժամանակ է ծախսել Լուսինեն այդ զիրքը կարդալու համար):

2. *Թվի մեծացումը մի քանի միավորով (ուղղակի և անուղղակի ձևով ձևակերպված խնդիրներ)*

Օրինակ ա) Արհեստավորը երկուսենյալանոց բնակարանի սենյակներից մեկը վերանորոգեց 7 օրում, իսկ մյուսի վերանորոգման համար 2 օր ավելի ժամանակ ծախսեց: Քանի՞ օրում արհեստավորը վերանորոգեց երկրորդ սենյակը:

բ) Արհեստավորը սենյակներից մեկը վերանորոգեց 7 օրում, որը 2 օրով պակաս է մյուս սենյակի վերանորոգման ժամանակից: Քանի՞ օրում արհեստավորը վերանորոգեց երկրորդ սենյակը:

3. *Թվի փոքրացումը մի քանի միավորով (ուղղակի և անուղղակի ձևով ձևակերպված խնդիրներ)*

Օրինակ ա) Լուսինեն գնեց 8 տետր, իսկ Լիլիթը՝ 2-ով պակաս: Քանի՞ տետր գնեց Լիլիթը: $(8 - 2 = 6)$

բ) Լուսինեն գնեց 8 տետր, որը 2-ով ավելի էր Լիլիթի գնած տետրերից: Քանի՞ տետր գնեց Լիլիթը: $(8 - 2 = 6)$

IV խումբ - խնդիրներ, որոնք անլուծելի են «հարաբերություն» հասկացության հետ:

1. *Խնդիրներ երկու թվերի հարաբերությունը գտնելու (կամ թվերի բազմապատիկ համեմատման վերաբերյալ)*

Օրինակ ա) Դավիթը գնեց 18 տետր և 6 մատիտ: Դավիթի գնած տետրերը քանի՞ անգամ էին ավելի իր գնած մատիտներից: $(18 : 6 = 3)$

բ) Նույն խնդրի հարցը կարելի է ձևակերպել այսպես. «Դավիթը տետրերից քանի՞ անգամ քիչ մատիտ գնեց»: $(18 : 6 = 3)$

2. *Թիվը մի քանի անգամ մեծացնելու վերաբերյալ խնդիրներ (ուղղակի և անուղղակի ձևով ձևակերպված)*

Օրինակ ա) Մայրիկը գնեց 3 կգ տանձ և 2 անգամ ավելի խնձոր: Մայրիկը քանի՞ կիլոգրամ խնձոր գնեց: $(3 \cdot 2 = 6)$

բ) Մայրիկը գնեց 3 կգ տանձ, որը 2 անգամ պակաս էր նրա գնած խնձորից: Մայրիկը քանի՞ կիլոգրամ խնձոր գնեց: $(3 \cdot 2 = 6)$

3. *Թիվը մի քանի անգամ փոքրացնելու վերաբերյալ խնդիրներ (ուղղակի և անուղղակի ձևով ձևակերպված)*

Օրինակ ա) Դավիթը գնեց 12 կգ գազար և 3 անգամ քիչ տխ: Քանի՞ կիլոգրամ տխ գնեց Դավիթը: $(12 : 3 = 4)$

բ) Դավիթը գնեց 12 կգ գազար, որը 3 անգամ ավելի էր նրա գնած տխից: Քանի՞ կիլոգրամ տխ գնեց Դավիթը: $(12 : 3 = 4)$

V խումբ - Ոչ ստանդարտ և հետաքրքրաշարժ խնդիրներ, որոնց լուծման միջոցով երեխաների մեջ պետք է առաջացնել սեր ու հետաքրքրություն մաթեմատիկայի նկատմամբ: Այդպիսի խնդիրների լուծումն է ստիպում աշակերտներին ճիշտ վերլուծություն կատարել, տարբերել ճիշտ դատողությունները ոչ ճիշտ դատողություններից:

Օրինակ Մենատնտեսի պահած քաղերն ու նապաստակներն ունեն ընդամենը 6 գլուխ և 16 ոտք: Քանի՞ բաղ և քանի՞ նապաստակ է պահում մենատնտեսը: (2 նապաստակ և 4 բաղ)

VI խումբ - Մաթեմատիկայի տարրական դասընթացում ընդգրկված հիմնական մեծությունների հետ առնչվող խնդիրներ: Այդ խնդիրների լուծման միջոցով աշակերտների մեջ ձևավորվում են պատկերացումներ մեծությունների և դրանց միավորների մասին: Այդպիսիք են՝ արագություն, հեռավորություն, պարագիծ, մակերես և այլ մեծություններ հաշվելու վերաբերյալ խնդիրները:

Մաթեմատիկայի տարրական դասընթացում հանդիպում ենք նաև այսպես կոչված «խնդիր հարցերի», որոնց լուծման համար ոչ մի քվաքանակյան գործողություն չի կատարվում: Օրինակ՝ «Կահանն ունի 5 գրիչ, իսկ Պազիկը՝ նույնքան մատիտ: Քանի՞ մատիտ ունի Պազիկը:

Կան նաև խնդիրներ, որոնցում քաջակալում է կամ ավելորդ է որևէ տվյալ: Օրինակ՝

ա) Առաջին դասարանում կա 28 աշակերտ, իսկ երկրորդում՝ ավելի: Քանի՞ աշակերտ կա երկրորդ դասարանում:

բ) Դավիթն ունի 8 մատիտ և 5 տետր, իսկ Լիլիթը՝ 6 մատիտ: Քանի՞ մատիտ ունեն նրանք միասին:

Հանդիպում ենք նաև այնպիսի խնդիրների, որոնցում քաջակալող տվյալը հնչողությամբ չի ընկալվում. «Խանութն ստացավ 7 տուսի կոնֆետ: Մեկ տուսիում կար 5 կգ կոնֆետ: Քանի՞ կիլոգրամ կոնֆետ ստացավ խանութը»:

(Առված չէ՝ յուրաքանչյուր տուսիում կար 5 կգ կոնֆետ):

Մաթեմատիկայի տարրական դասընթացում մենք ավելի հաճախ ենք հանդիպում բաղադրյալ խնդիրների, որոնց դասակարգման և ուսուցման մեթոդների մասին կխոսենք հետագայում:

§ 3. Խնդիրների լուծման հիմնական փուլերը

Տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցումն անհնար է պատկերացնել առանց խնդիրների լուծման, որոնց օգնությամբ իմաստավորվում և հիմնավորվում է տեսական նյութը, ուսուցվող մաթեմատիկական նյութը կապվում է երեխայի շրջապատի և առօրյա կյանքի հետ:

Խնդրի լուծումը մարզում է երեխայի միտքը, զարգացնում նրա երևակայությունը և տրամաբանական մտածողությունը, ձևավորում է դժվարությունները հաղթահարելու կամք ու սկսած աշխատանքը մինչև վերջ հասցնելու սովորություն: Խնդրի լուծման համար երեխան դիմում է մտավոր գործունեության այնպիսի տեսակների, ինչպիսին են վերլուծումն ու համադրումը, տվյալների միջև եղած կախվածությունների հայտնաբերումը, զխավոր և երկրորդական տվյալների առանձնացումը: Խնդիրների լուծման միջոցով մտածողության զննա-առարկայական ձևից երեխաներն անցնում են վերացականին, ինչը կատարվում է աստիճանաբար և հիմնավոր կերպով: Պատահական չէ, որ դեռևս միայն գույներով, աստիճաններով և նկարներով մտածող երեխան կարճ ժամանակամիջոցում խնդիրների լուծման ընթացքում կարողանում է քառեռով զրկած տեքստը արտահայտել մաթեմատիկական պայմանաձևանների միջոցով (կազմել խնդրի լուծման մոդելը), կոնկրետից անցնել վերացականին, տակ քառային ընկալման հիման վրա մտապահել և պատկերացնել խնդրի բովանդակությունը, ինքնուրույն ընտրել լուծման գործողությունները (կամ գործողությունը) ու հմտանալ լրացուցիչ աշխատանքներ կատարելու մեջ:

Խնդիրների լուծման անցնելու համար աշակերտների հետ պետք է տանել որոշակի նախապատրաստական աշխատանքներ, որոնց ընթացքում անհրաժեշտ է.

ա) աշակերտներին սովորեցնել, որ նրանք մոդելավորեն տարբեր պահանջներ, իրադրություններ: Այսպես, օրինակ, միավորեն տարբեր հավաքածուներ, անջատեն տրված հավաքածուի մի մասը, տրված աստիճանների, նկարների քանակը մի քանի միավորով մեծացնեն (փոքրացնեն), համեմատեն հավաքածուների տարբերի քանակը և այլն:

բ) Աշակերտներին սովորեցնել, որ տրված իրադրությունից ելնելով՝ ասացադրված հարցին պատասխանելու համար ճիշտ ընտրեն կատարվող քվաքանական գործողությունը կամ ճիշտ կազմեն քվային արտահայտությունը:

գ) Համոզվել, որ աշակերտները ճիշտ են հասկանում «սովեցանել», «պակասեցնել» բառերի իմաստը: Եթե տեքստային խնդիրը ձևակերպված է ուղղակի ձևով, ապա աշակերտները հեշտությամբ են ընտրում խնդրի լուծման համար համապատասխան քվաքանական գործողությունը: Եթե խնդրի պայմանում օգտագործված են «զնեցին», «սովեցալ», «դարձալ», «միասին» և այլ բառեր, ապա աշակերտներն ընտրում են գումարման գործողությունը, իսկ եթե ասված է «բթան», «տվեցին», «տարան», «կերան» և այլն, ապա՝ հանման գործողությունը:

Եթե խնդիրը տրվում է ոչ սովորականի նման ձևակերպված, ապա աշակերտները թույլ են տալիս սխալ: Օրինակ՝

1) Դուլլից նախ դատարկեցին 5 լ ջուր, հետո՝ էլի 2 լ: Քանի՞ լիտր ջուր դատարկեցին դուլլից:

Որոշ աշակերտներ տալիս են սխալ լուծում՝ $5 - 2 = 3$ (լ):

2) Դավիթն ու Սուրենն ունեցել են 7 գնդակ: Քանի՞ գնդակ է ունեցել Դավիթը, եթե Սուրենն ունեցել է 3 գնդակ:

Սխալ են լուծում՝ $7 + 3 = 10$:

Թվաքանական խնդիրների լուծման հիմնական պայմանը ինֆորմացիայի ճիշտ ընկալումն ու մշակումն է: Առաջին իսկ քայլերից երեխաները պետք է հասկանան, որ հնարավոր չէ խնդիրը լուծել առանց խնդրի քվանդակության ճիշտ ըմբռնման: Ակզբնական շրջանում խնդիրները լուծվում են գլխավորապես զննական պարագաների օգնությամբ, քանի որ երեխաների մտածողությունը զննա-ասարկայական է, կոնկրետ է: Իսկ մտածողության զննա-ասարկայական ձևից վերացականին անցման շրջանում դժվարությամբ խնդիրը հաղթահարելու համար խնդիրը քաջատրվում է կատարելով համապատասխան գծագիր, իսկ եթե կան նկարներ, ապա՝ դրանց միջոցով: Այնուհետև կատարվում է խնդրի համատարածությունը, կազմվում լուծման պլանը: Հետագայում պահանջվում է համատարածումը կատարել առանց զննական պարագաների օգտագործման: Ուսումնական գործընթացում «խնդիր լուծել» նշանակում է ոչ միայն պատասխանել ասացադրված հարցին, այլ նաև բնու-

բազրել պայմանից պահանջին անցնելու գործընթացն անպես, որ այն հասկանալի լինի երեխաների համար:

Խնդիրներ լուծելու հմտություններ ձևավորելու համար պետք է պարզ խնդիրների հետ կազմակերպել տարբեր աշխատանքներ՝ կազմել հակադարձ, ուղղակի ձևով արտահայտված խնդիրը դարձնել անուղղակի ձևով արտահայտված և այլն: Պետք է հիշել, որ քաղաքրյալ խնդիրները լուծելիս փաստորեն այն տրոհվում է պարզ խնդիրների: Չնդհանրապես խնդիրների հետ տարվող աշխատանքներում մեծ տեղ պետք է հատկացնել մոդելավորմանը: Պետք է նշել, որ մոդելավորմանը չի հակասում խնդրի բովանդակության համառոտագրմանը կամ զենական պատկերացմանը: **Արդե՞ր** ասելով պետք է հասկանալ մտովի կամ հաստիկ կատարված համակարգ (կամ համախումբ), որը կոնկրետ կերպով արտացոլում է խնդրի բովանդակությունը:

Ճիշտ են նշում որոշ մեթոդիստներ, որ մոդելները կարելի է տրոհել երկու խմբի՝

1) առարկայական կամ նյութական մոդելներ,

2) բառա-պայմանանշալի մոդելներ, որոնք կարելի է բաժանել երեք խմբի.

ա) տարբեր տեսակի նկարներ, սխեմաներ, զմազորեք և այլն,

բ) տարբեր բվային արտահայտություններ, հավասարումներ, անհավասարումներ և այլն,

գ) իդեալական մոդելներ (մտային, երևակայական և այլն):

Թվաբանական եղանակներով խնդրի լուծման մոդել է հանդիսանում կատարվող գործողությունների հաջորդայնությունը կամ բվային արտահայտություն, իսկ հանրահաշվական եղանակով լուծման դեպքում՝ կազմած հավասարումը:

Ռուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խնդրի լուծման մաթեմատիկական մոդելի կատարումն հաճախ երեխաների համար լինում է դժվար: Այդպիսի դեպքում ուսուցիչը պետք է դիմի «օժանդակ» մոդելի կատարման մեթոդին, որն հեշտացնում է խնդրի բովանդակության ընկալումը և լուծման պլանի կազմումը: Կարելի է ասել, որ օժանդակ մոդելը հանդիսանում է կամուրջ՝ քառային և մաթեմատիկական մոդելների միջև:

Ցույց տանք խնդրի մոդելի կատարման օրինակ:

Խնդիր: Երեք սպորտիստներ արել են որոշ երկրորդի՝ 4 անգամից քան առաջինը: Օճանդակ այն երեք սպորտիստներին:

Խնդրի լուծելու համար կա պետքից անցնել մաթեմատիկական



կարելի է մոդել կատարել մաթեմատիկական լուծման մոդելի յուրացմանը: Մոդելի կատարման պլան կազմելու համար:

1) Քանի՞ անգամ արել է առաջինը 2x - 4x

2) Քանի՞ անգամ արել է երկրորդը 2x - 8x

3) Օճանդակ քանի՞ անգամ արել է առաջինը 2x - 24x

Ցանկացած տեքստային խնդիրում:

1. Օճանդակում խնդրի լուծմանը տարբեր եղանակներով Ռուսացնել է կարելի է տեղի ունենա միայն հետևյալ դեպքերում: Երեք սպորտիստների միջև կարելի է կազմել:


2. Օճանդակում խնդրի լուծմանը տարբեր եղանակներով Ռուսացնել է կարելի է տեղի ունենա միայն հետևյալ դեպքերում: Երեք սպորտիստների միջև կարելի է կազմել:

3. Օճանդակում խնդրի լուծմանը տարբեր եղանակներով Ռուսացնել է կարելի է տեղի ունենա միայն հետևյալ դեպքերում: Երեք սպորտիստների միջև կարելի է կազմել:

4. Օճանդակում խնդրի լուծմանը տարբեր եղանակներով Ռուսացնել է կարելի է տեղի ունենա միայն հետևյալ դեպքերում: Երեք սպորտիստների միջև կարելի է կազմել:

խնդիր: Երեք ակտոմեքենաներից առաջինին բարձեցին 28 արկղ խաղող, երկրորդին՝ 4 արկղ սալաա, իսկ երրորդին՝ 6 արկղ ավելի, քան առաջինին: Ընդամենը քանի՞ արկղ խաղող բարձեցին այդ երեք ակտոմեքենաներին:

Խնդիրը լուծելու համար նախտակախառմար է բառային ձևակերպումից անցնել մաթեմատիկական մոդելի կառուցելով այսպիսի պեմնա.



Այդպիսի մոդելի կառուցումը կարելի է կատարել խնդրի վերլուծության ժամանակ, որը կնպաստի նրա բովանդակության ավելի մատչելի յուրացմանը: Մոդելի կառուցումից հետո աշակերտները հեշտությամբ այն կլուծեն բլաբանական եղանակով:

1) Քանի՞ արկղ խաղող բարձեցին երկրորդ ակտոմեքենային.

$$28 - 4 = 24 \text{ (արկղ)}$$

2) Քանի՞ արկղ խաղող բարձեցին երրորդ ակտոմեքենային.

$$28 + 6 = 34 \text{ (արկղ)}$$

3) Ընդամենը քանի՞ արկղ խաղող բարձեցին երեք մեքենաներին.

$$28 + 24 + 34 = 86 \text{ (արկղ)}$$

Պատ.՝ 86 արկղ:

Ցանկացած տեքստային խնդրի լուծում կատարվում է հետևյալ փուլերով.

I. Ծանոթացում խնդրի բովանդակությանը, որը կարող է տեղի ունենալ տարբեր եղանակներով.

ա) Ուսուցիչն է կարդում խնդիրը: Նպատակախառմար է, որ դա տեղի ունենա միայն հետևյալ դեպքերում.

-աշակերտները դեռ կարդալ չգիտեն (առաջին դասարան, առաջին կիսամյակ),

-աշակերտների մոտ խնդրի տեքստը չկա.

-մի քանի աշակերտներ կարդում են խնդիրը, սակայն բովանդակությունն աշակերտները չեն ընկալում:

բ) Ուսուցչի հանձնարարությամբ աշակերտներից մեկը բարձրաձայն կարդում է խնդիրը, իսկ մյուսներն հետևում են իրենց դասագրքում տրված տեքստին:

գ) Աշակերտները խնդիրը կարդում են մտքում, որից հետո ուսուցչի պահանջով նրանցից մեկը պատմում է խնդրի բովանդակությունը:

դ) Ուսուցչի հանձնարարությամբ աշակերտներից մեկը բարձրաձայն կարդում է խնդիրը, մյուսները, գրքերը ծածկած, լսում են նրան: Այնուհետև հարցերի միջոցով մեկնաբանվում է խնդրի պայմանը և պահանջը:

ե) Աշակերտները խնդիրը կարդում են մտքում, ապա պատասխանում ուսուցչի հարցերին և այլն:

Սկսած հենց ասացին դասարանից՝ աշակերտներին պետք է տվորենել, որ նրանց միշտ կարդան խնդիրը՝ անջատելով գլխավորը երկրորդականից, պայմանը պահանջից, հատուկ նշեն թվային տվյալները, ինչպես այդ տվյալների, այնպես էլ դրանց և անհայտ մեծությունների միջև տրված կապերը:

Խնդիրների ուսուցման սկզբնական շրջանում երեխաները խնդիրը կարող են կարդալ մի քանի անգամ, սակայն հետագայում պետք է հասնել նրան, որ նրանք այն կարդան մեկ անգամ: Այդպիսի պահանջը նրանց կատիպի, որ նրանք ավելի ուշադիր կարդան խնդիրը:

Խնդրի բովանդակության հետ ծանոթանալիս աշակերտները պետք է պատկերացնեն այն իրադրությունը, որի մասին խոսվում է խնդրի տեքստում: Հնարավորության դեպքում կարելի է խնդրի բովանդակությունը քննականացնել:

II. Խնդրի բովանդակության վերլուծություն, համատեսագրում (մոդելի կառուցում), լուծման պլանի կազմում:

Պարզ խնդիրների համար այս փուլում տարվող աշխատանքներն ասանձնակի դժվարություն չեն ներկայացնում: Բաղադրյալ խնդիրների համար այդ գործընթացը բարդ և աշակերտների համար ոչ միշտ է դյուրին: Այս փուլում պարզաբանվում է, թե ինչ տվյալներ են հայտնի խնդրի պայմանում, ինչ կապ կա տվյալների, ինչ-

րը, սակայն բովան-

ներից մեկը բարձ-

րում, որից հետո ու-

ներից մեկը բարձ-

րում, ապա պատաս-

ներիս պետք է տ-

րում երեխաները

մկայն հետագայում

իս աշակերտները

ի մասին խոսվում է

իս համատուգրում

իս համատուգրում

իս համատուգրում

պես նաև դրանց և անհայտ մեծության միջև, ինչ է պահանջում խնդիրը:

Աշակերտները պետք է հստակ պատկերացում ունենան այդ բոլորի մասին, որպեսզի կարողանան կատարել խնդրի լուծման մոդելը: Ակզբնական շրջանում այդ աշխատանքը կազմակերպում և ղեկավարում է ուսուցիչը, սակայն հետագայում պետք է հասնել նրան, որ աշակերտներն այն կատարեն ինքնուրույն:

Խնդրի վերլուծությունը կարելի է կատարել կամ **Վեղբուժական** (հարցից դեպի տվյալներ) կամ **Համադրական** (տվյալներից դեպի հարց) եղանակով: Կոնկրետ օրինակով ցույց տանք այդ:

Խնդիր: Խնձորի ծառի ճյուղին կար 21 խնձոր: Երբ Դավիթը մի քանի խնձոր քաղեց, այդ ճյուղին մնաց 15 խնձոր: Դավիթը քանի՞ խնձոր քաղեց այդ ճյուղի խնձորներից:

1. Վեղբուժական եղանակ.

Ուս. - Որպեսզի պատասխանենք խնդրի հարցին, ի՞նչ պետք է իմանանք:

Աշ. - Պետք է իմանանք քանի խնձոր է եղել ծառի ճյուղին և Դավիթի քաղելուց հետո քանիսն է մնացել:

Ուս. - Խնդրի պայմանից հայտնի՞ է, թե ծառի ճյուղին քանի խնձոր է եղել: (Եղել է 21 խնձոր):

Ուս. - Հայտնի՞ է, թե վերջում քանի խնձոր է մնացել ծառի ճյուղին: (Մնացել է 15 խնձոր):

Ուս. - Ինչպե՞ս իմանանք, թե Դավիթը քանի խնձոր քաղեց:
Լուծում՝ $21 - 15 = 6$ (խ.)

Պատ.՝ 6 խնձոր:

2. Համադրական եղանակ.

Ուս. - Խնդրի պայմանից ի՞նչ է հայտնի:
Աշ. - Հայտնի է, որ խնձորի ծառի ճյուղին կար 21 խնձոր:

Ուս. - Էլ ի՞նչ է հայտնի:
Աշ. - Հայտնի է, որ Դավիթի՝ մի քանի խնձոր քաղելուց հետո այդ ճյուղին մնացել է 15 խնձոր:

Ուս. - Այդ տվյալներով կարո՞ղ ենք պատասխանել խնդրի հարցին: (Այո)

Լուծում՝ $21 - 15 = 6$ (խ.)
Պատ.՝ 6 խնձոր:

Դասվարներն հաճախ են օգտվում վերլուծական եղանակից, սակայն հոգեբանները պնդում են, որ կրտսեր դպրոցականների համար ավելի մատչելի է խնդրի վերլուծման համադրական եղանակը:

Խնդրի վերլուծության ժամանակ կարելի է օգտվել զննակառուցյունից՝ առարկաներ, նկարներ, զծագրեր, սխեմաներ, աղյուսակներ և այլն:

Սկսած հենց առաջին դասարանից՝ երեխաներին պետք է սովորեցնել, որ խնդրի վերլուծությունից հետո (կամ վերլուծության ընթացքում) այն համատեստագրեն, կատուցեն օժանդակ մոդելը: Խնդրի համատեստագրումը կարելի է կատարել տարբեր եղանակներով. գրել միայն բնական տվյալները, պատկերել գրաֆիկի կամ սխեմայի տեսքով, աղյուսակի միջոցով և այլն: Ընդհանրապես խնդրի թվանդակության համատեստագրությունը պետք է պարունակի բնական և անհայտ տվյալները, որոշ բառեր, որոնք պետք է հուշեն, թե ինչի մասին է խոսվում խնդրում, ինչ առնչության մեջ են գտնվում տվյալներն, ինչպես նաև տվյալները և անհայտները: Խնդրի համատեստագրությունը պետք է լինի այնպիսին, որ այն ընթերցելիս հասկացվի խնդրի թվանդակությունը: Յուրաքանչյուր խնդրի համար կարելի է կիրառել համատեստագրության մեկ եղանակ:

Տարրական դասարաններում ուսուցվող որոշ խնդիրների համատեստագրումը կարելի է կատարել վերլուծությունից հետո: Սակայն ավելի բարդ խնդիրների համար այն կարելի է կատարել վերլուծության ընթացքում, որը կհեշտացնի թվանդակության հաջող յուրացումը:

III. Խնդրի լուծման պլանի իրականացում (խնդրի լուծում):

Խնդրի վերլուծության ժամանակ փաստորեն որոշվում է լուծման եղանակը: Որպեսզի աշակերտները կարողանան ինքնուրույն որոնել ու գտնել խնդրի լուծման տարբեր եղանակներ, նրանք պետք է ունենան մտքի ճկունություն, որն ըստ հոգեբանների հետազոտությունների՝ այդ հասակում նրանց մեջ բուռն զարգանում է: Եթե նախադպրոցական հասակում խնդիրների լուծման ժամանակ երեխան հիմնականում օգտվում է պատկերային մտածողությունից, ապա դպրոցում նրանից պահանջվում է անցնել բառատրամաբան

նական մտածողության, որը կրտսեր դպրոցականի համար բարդ գործունեություն է:

Տեքստային խնդրի բարդությունը որոշվում է դրա լուծման համար կատարվող գործողությունների քանակից: Խնդրի լուծման համար աշակերտը պետք է կարողանա տեքստը համատարակի ներկայացնել մաթեմատիկական լեզվով: Իսկ դրա համար նա պետք է տիրապետի մաթեմատիկայի տարրական դասընթացի լեզվին: Տեքստային խնդիրների լուծման հիմնական դժվարությունը հենց տեքստի չարադրանքը մաթեմատիկական լեզվով արտահայտելն է, այլ կերպ ասած՝ մաթեմատիկական մոդելի ստեղծումը:

Սովորաբար խնդրի լուծման եղանակն ընտրվում է նպատակահարմարությունից: Ռասազրեցրում որոշ խնդիրների համար նշվում է լուծման եղանակը.

ա) լուծել՝ առանձին գրելով յուրաքանչյուր հարց (կատարելով համապատասխան գործողություն),

բ) կազմել արտահայտություն,

գ) կազմել հավասարում և այլն:


Կարելի է հանձնարարել, որ աշակերտները նույն խնդիրը լուծեն տարբեր եղանակներով, որով նրանք կստուգեն խնդրի լուծումը:

Մաթեմատիկայի տարրական դասընթացում ընդգրկված տեքստային խնդիրների զգալի մասը կարելի է լուծել քանակոր: Հետազոտությունները ցույց են տվել, որ որոշ դասվարներ շնորհում են «տարբեր եղանակներով խնդրի լուծում» և «քվարանական եղանակով խնդրի լուծումը տարբեր եղանակներով գրառում» հասկացությունները:

Մինչև վերջին տասնամյակները տարրական դասարաններում տեքստային խնդիրների լուծման համար նշվում էր երկու եղանակ՝ քվարանական և հանրահաշվական: Վերջին տարիներին մեթոդիկայում [4] տարբերում են խնդիրների լուծման հետևյալ եղանակները.

1. *Պրոծնական կամ առարկայական*: Այս եղանակից օգտվում են առաջին դասարանում, ուսումնական տարվա առաջին 1-3 ամիսների ընթացքում:

Նոդիլ: Ուսուցչուհին Ռավիին նախ տվեց 3 մատիտ, այնուհետև ևս 2 մատիտ: Քանի՞ մատիտ ստացավ Ռավիից:



Լուծում
 $3+2=5$
 Պատ.՝ 5 մատիտ:

Այս եղանակից օգտվելով երեխաները կարող են լուծել նաև հետևյալ բովանդակությամբ խնդիրներ.

«8 տետրը պետք է տալ մի քանի աշակերտի՝ յուրաքանչյուրին 2 տետր: Քանի՞ աշակերտ տետր կտանա»:

Ուսուցչի մի քանի աշակերտի 2-ական տետր տալով պարզվում է, որ 2-ական տետր կտանա 4 աշակերտ: Այս բովանդակությամբ խնդիրները երեխաները գործնականորեն կարող են լուծել առանց բաժանման գործողության իմաստի իմացության:

2. *Յվազանական եղանակ:* Տարրական դասարաններում բվարանական եղանակով խնդիրների լուծումը կարող է գրասովել տարբեր ձևերով.

- ա) գրասովում են կատարվող գործողություններն առանց մեկնաբանությունների.
- բ) գրասովում են գործողությունները մեկնաբանություններով.
- գ) գրասովում են առաջադրվող հարցերը և կատարվող գործողությունները:

Որոշ դեպքերում գրասովում է խնդրի լուծման համար կազմված արտահայտությունը, որը չի հանդիսանում խնդրի լուծման այլ եղանակ: Այն հանդիսանում է լուծման այլ գրառում: Որոշ մեթոդիստներ այն համարում են հանրահաշվական եղանակով խնդրի լուծում:

Այժմ կոնկրետ խնդրի լուծման օրինակով ցույց տանք գրառման այլ ձևերը:

Խնդիր: Վարպետը երեք շաբաթում պետք է պատրաստեր 100 վառարան: Առաջին շաբաթում նա պատրաստեց 34 վառարան, երկրորդում՝ 2-ով քիչ, քան առաջինում: Մնացած վառարանները

նա պատրաստեց երրորդ շաբաթում: Վարպետը քանի՞ վառարան պատրաստեց երրորդ շաբաթում:

- ա) 1) $34 - 2 = 32$ (վ.)
2) $34 + 32 = 66$ (վ.)
3) $100 - 66 = 34$ (վ.)

Պատ.՝ 34 վառարան:

- բ) 1) $34 - 2 = 32$ (վ.) (II շաբաթում պատրաստած վառարանները)
2) $34 + 32 = 66$ (վ.) (I և II շաբաթներում պատրաստած վառարանները)
3) $100 - 66 = 34$ (վ.) (III շաբաթում պատրաստած վառարանները)

Պատ.՝ 34 վառարան:

գ) 1) Վարպետը քանի՞ վառարան պատրաստեց երկրորդ շաբաթում.

- $34 - 2 = 32$ (վ.)
2) Վարպետը ընդամենը քանի՞ վառարան պատրաստեց առաջին երկու շաբաթում.
 $34 + 32 = 66$ (վ.)
3) Վարպետը քանի՞ վառարան պատրաստեց 3-րդ շաբաթում.
 $100 - 66 = 34$ (վ.)

Պատ.՝ 34 վառարան:

Արտահայտություն կազմելով.

$100 - (34 - 2) - 34$	կամ՝	$100 - (34 + (34 - 2))$
$100 - 32 - 34 = 34$		$100 - (34 + 32) = 100 - 66 = 34$


Պատ.՝ 34 վառարան:

Թվաբանական եղանակով խնդրի լուծումը կարելի է գրառել նաև այսպես՝

- | | | |
|-------------------------|-------------|-------------------------|
| 1) $34 - 2 = 32$ (վ.) | կամ այսպես՝ | 1) $100 - 34 = 66$ (վ.) |
| 2) $100 - 34 = 66$ (վ.) | | 2) $34 - 2 = 32$ (վ.) |
| 3) $66 - 32 = 34$ (վ.) | | 3) $66 - 32 = 34$ (վ.) |

Պատ.՝ 34 վառարան:

Այս տիպի խնդիրների լուծման համար նպատակահարմար է կառուցել մաթեմատիկական մոդելը՝ օգտվելով հատվածներից:



Լուծում

- 1) $34 - 2 = 32$ (վ.)
- 2) $34 + 32 = 66$ (վ.)
- 3) $100 - 66 = 34$ (վ.)

Պատ.՝ 34 վատարան:

3. Հանրահաշվական եղանակ:

Կրտսեր դպրոցում գործող մաթեմատիկայի նոր ծրագրերում հանրահաշվական նյութին առանձնակի տեղ չի հատկացվում: Այդ իսկ պատճառով հավասարումների մասին աշակերտներին ոչինչ չի ասվում, չնայած հետազոտությունները և տարիների փորձը ցույց է տվել, որ կրտսեր դպրոցականներն հեշտությամբ են յուրացնում պարզագույն հավասարումների լուծումը՝ օգտվելով թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքների միջև եղած կապից: Կարծում ենք, որ դասվարը պետք է իմանա տեքստային պարզ խնդիրների լուծման այդ եղանակը ևս, քանի որ այդ հարցը վաղ թե ուշ կընդգրկվի ծրագրերում:

Հավասարում կազմելու եղանակով խնդիրը լուծելու համար պետք է ճիշտ ընտրել անհայտը ու կապեր ստեղծել տվյալների և անհայտի միջև: Նշենք նաև, որ խնդիրների լուծման ժամանակ հիմնականում պետք է օգտվել թվաբանական եղանակից:

Խնդիր 1. Սուրենը 4 գրիչի համար վճարեց 100 դրամ: Ի՞նչ արժե մեկ գրիչը, եթե դրանք միևնույն գնի են:

Եթե մեկ գրիչի գինը նշանակենք x -ով, ապա 4 գրիչի համար վճարված գումարը կկազմի $4 \cdot x$, որն ըստ պայմանի հավասար է 100 դրամի: Ուրեմն՝ $4 \cdot x = 100$: Անհայտ է երկրորդ արտադրիչը.

$$x = 100 : 4$$

$$x = 25$$

Պատ.՝ 25 դրամ:

նա պատրաստեց երրորդ շաբաթում: Վարպետը քանի՞ վառարան պատրաստեց երրորդ շաբաթում:

- ա) 1) $34 - 2 = 32$ (վ.)
2) $34 + 32 = 66$ (վ.)
3) $100 - 66 = 34$ (վ.)

Պատ.՝ 34 վառարան:

- բ) 1) $34 - 2 = 32$ (վ.) (II շաբաթում պատրաստած վառարանները)
2) $34 + 32 = 66$ (վ.) (I և II շաբաթներում պատրաստած վառարանները)
3) $100 - 66 = 34$ (վ.) (III շաբաթում պատրաստած վառարանները)

Պատ.՝ 34 վառարան:

գ) 1) Վարպետը քանի՞ վառարան պատրաստեց երկրորդ շաբաթում.

- $34 - 2 = 32$ (վ.)
2) Վարպետը ընդամենը քանի՞ վառարան պատրաստեց առաջին երկու շաբաթում.
 $34 + 32 = 66$ (վ.)
3) Վարպետը քանի՞ վառարան պատրաստեց 3-րդ շաբաթում.
 $100 - 66 = 34$ (վ.)

Պատ.՝ 34 վառարան:

Արտահայտություն կազմելով.

$100 - (34 - 2) - 34$	կամ՝	$100 - (34 + (34 - 2))$
$100 - 32 - 34 = 34$		$100 - (34 + 32) = 100 - 66 = 34$


Պատ.՝ 34 վառարան:

Թվաբանական եղանակով խնդրի լուծումը կարելի է գրառել նաև այսպես՝

- | | | |
|-------------------------|-------------|-------------------------|
| 1) $34 - 2 = 32$ (վ.) | կամ այսպես՝ | 1) $100 - 34 = 66$ (վ.) |
| 2) $100 - 34 = 66$ (վ.) | | 2) $34 - 2 = 32$ (վ.) |
| 3) $66 - 32 = 34$ (վ.) | | 3) $66 - 32 = 34$ (վ.) |

Պատ.՝ 34 վառարան:

Այս տիպի խնդիրների լուծման համար նպատակահարմար է կառուցել մաթեմատիկական մոդելը՝ օգտվելով հատվածներից:



Լուծում

- 1) $34 - 2 = 32$ (վ.)
- 2) $34 + 32 = 66$ (վ.)
- 3) $100 - 66 = 34$ (վ.)

Պատ.՝ 34 վատարան:

3. Հանրահաշվական եղանակ:

Կրտսեր դպրոցում գործող մաթեմատիկայի նոր ծրագրերում հանրահաշվական նյութին առանձնակի տեղ չի հատկացվում: Այդ իսկ պատճառով հավասարումների մասին աշակերտներին ոչինչ չի ասվում, չնայած հետազոտությունները և տարիների փորձը ցույց է տվել, որ կրտսեր դպրոցականներն հեշտությամբ են յուրացնում պարզագույն հավասարումների լուծումը՝ օգտվելով թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքների միջև եղած կապից: Կարծում ենք, որ դասվարը պետք է իմանա տեքստային պարզ խնդիրների լուծման այդ եղանակը ևս, քանի որ այդ հարցը վաղ թե ուշ կընդգրկվի ծրագրերում:

Հավասարում կազմելու եղանակով խնդիրը լուծելու համար պետք է ճիշտ ընտրել անհայտը ու կապեր ստեղծել տվյալների և անհայտի միջև: Նշենք նաև, որ խնդիրների լուծման ժամանակ հիմնականում պետք է օգտվել թվաբանական եղանակից:

Խնդիր 1. Սուրենը 4 գրիչի համար վճարեց 100 դրամ: Ի՞նչ արժե մեկ գրիչը, եթե դրանք միևնույն գնի են:

Եթե մեկ գրիչի գինը նշանակենք x -ով, ապա 4 գրիչի համար վճարված գումարը կկազմի $4 \cdot x$, որն ըստ պայմանի հավասար է 100 դրամի: Ուրեմն՝ $4 \cdot x = 100$: Անհայտ է երկրորդ արտադրիչը.

$$x = 100 : 4$$

$$x = 25$$

Պատ.՝ 25 դրամ:



Պատ. 34 վատարան:

...ի նոր ծրագրերում
...ի հատկացվում: Այդ
...վերաբերումներին ոչինչ
...և տարիների փորձը
...հնչողությամբ են յու-
...ունց՝ օգտվելով բնա-
...և արդյունքների միջև
...ետք է իմանա տեքս-
...անց և, քանի որ այդ

...որը լուծելու համար
...տեղծել տվյալների և
...ի լուծման ժամանակ
...եղանակից:

...100 դրամ: Ի՞նչ ար-

...այա 4 գրիչի համար
...այմանի հավասար է
...որող արտադրիչը:

Պատ. 25 դրամ:

խնդիր 2. Եթե մտքումս պահած թվին գումարեմ 5, կստանամ 12: Ո՞ր թիվն են մտքումս պահել: ($x + 5 = 12$, $x = 12 - 5$, $x = 7$)

խնդիր 3. Եթե մտքումս պահած թիվը մեծացնեմ 5 անգամ, ապա կստանամ 30: Ո՞ր թիվն են մտքումս պահել:

Եթե մտքումս պահած թիվը, որն անհայտ է, նշանակեմ x -ով և այն մեծացնեմ 5 անգամ, կստանամ $5 \cdot x$, որն հավասար է 30:

Ուրեմն՝

$$5 \cdot x = 30$$

$$x = 30 : 5$$

$$x = 6:$$

Պատ. 6-ը:

Մաթեմատիկայի տարրական դասընթացում կան այնպիսի խնդիրներ, որոնք դասխարները դժվարանում են (կամ չեն կարողանում) լուծել թվաբանական եղանակով: Այդպիսի դեպքում նրանք խնդիրը լուծում են հանրահաշվական եղանակով, իսկ այնուհետև անցնում (որոշ դեպքերում չեն անցնում) թվաբանական եղանակին: Հանրահաշվական եղանակով խնդրի լուծումը դասխարին պետք է օգնի գտնելու թվաբանական եղանակով խնդրի լուծումը: Այդ ցույց տանք մեկ խնդրի լուծման օրինակով:

խնդիր: Դավիթը գնեց միևնույն գնի 4 տետր, որից հետո նրա մոտ մնաց 400 դրամ: Եթե նա գներ նույն գնի 7 տետր, ապա նրա մոտ կմնար 160 դրամ: Ի՞նչ արժե Դավիթի գնած մեկ տետրը:

Դասվարը կարող է այն լուծել (իր համար) հանրահաշվական եղանակով՝ այսպես. մեկ տետրի գինը նշանակենք x -ով: 4 տետրը կարժենա $4 \cdot x$ դրամ, իսկ 7 տետրը՝ $7 \cdot x$ դրամ: Քանի որ Դավիթի մոտ եղած գումարն մնում է անփոփոխ, ուստի $4 \cdot x + 400 = 7 \cdot x + 160$, որտեղից՝ $7 \cdot x - 4 \cdot x = 400 - 160$, $3 \cdot x = 240$, $x = 240 : 3$, $x = 80$:

Այսպիսի լուծումից հետո պետք է անցնել թվաբանական եղանակին.

- 1) Քանի՞ տետր ավելի կարող էր գնել Դավիթը.
 $7 - 4 = 3$ (տ.)
- 2) Ինչքա՞ն ավելի դրամ կվճարեր Դավիթն այդ 3 տետրի համար.
 $400 - 160 = 240$ (դր.)
- 3) Ի՞նչ գնի է Դավիթի գնած մեկ տետրը.
 $240 : 3 = 80$ (դր.)

Պատ. 80 դրամ:

IV. խնդրի լուծման ստուգում.

Ստուգել խնդրի լուծումը, նշանակում է իմանալ՝ այն ճիշտ է լուծված, թե ոչ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խնդրի լուծման ստուգումը միշտ չէ, որ կատարվում է թե՛ ուսուցիչների և թե՛ աշակերտների կողմից:

Տարբալան դասարաններում խնդիրների լուծման ստուգման համար մեթոդիկայում ընդունված են հետևյալ եղանակները.

1. տարբեր եղանակներով խնդրի լուծում,
2. տրված խնդրի հակադարձի կազմում և լուծում,
3. խնդրի լուծման արդյունքում ստացած և պայմանում տրված թվերի միջև համապատասխանություն ստեղծելով,
4. որոնելի մեծության բվալին արժեքի սահմանների մոտավոր որոշում:

Այժմ քննարկենք խնդիրների լուծման ստուգման այդ եղանակներն առանձին-առանձին:

1. Տարբեր եղանակներով խնդրի լուծում.

Քննարկենք կոնկրետ խնդիր և տանք դրա լուծումը տարբեր եղանակներով:

խնդիր: Դավիթն ունի 10 մատիտ, որոնցից 5-ը սև գույնի են, 2-ը՝ կանաչ, մնացածը՝ կապույտ: Բանի՞ կապույտ գույնի մատիտ ունի Դավիթը:

ա) Թվաբանական եղանակ.

- Միանգամից կարո՞ղ ենք տալ խնդրի հարցի պատասխանը (Ոչ):

- Կարո՞ղ ենք իմանալ, թե Դավիթը քանի սև և կանաչ գույնի մատիտ ունի:

(Այո. $5+2=7$):

- Ինչպե՞ս իմանանք, թե քանի կապույտ գույնի մատիտ ունի Դավիթը ($10-7=3$):

Արտահայտություն կազմելով կունենանք.

$$10-(5+2)=10-7=3$$

Պատ.՝ 3 մատիտ:

բ) Հանրահայտական եղանակ.

Դավիթի մոտ եղած կապույտ գույնի մատիտների քանակը մեզ հայտնի չէ: Այն նշանակենք x -ով: Գումարելով երեք գույնի մա-


տիտների քանակն արտահայտող բվերը՝ կտանանք Ղավիրի մոտ եղած մատիտների ընդհանուր քանակը՝ 10-ը:

Ուրեմն՝

$$\begin{aligned} 5 + 2 + x &= 10 \\ 7 + x &= 10 \\ x &= 10 - 7 \\ x &= 3 \end{aligned}$$

Պատ.՝ 3 մատիտ:

գ) *Գրաֆիկական (կամ երկրաչափական) եղանակ.*



Հաշվելով հատվածի մնացած մասերը՝ միանգամից պարզվում է, որ կապույտ գույնի մատիտները 3-ն են:

Պատ.՝ 3 մատիտ:

Տարբեր եղանակներով խնդիրը լուծելով՝ ստացվել է նույն պատասխանը, նշանակում է՝ խնդիրը ճիշտ է լուծված: Խնդիրների լուծման ստուգումը կատարելիս, ժամանակի խնայողության նկատառումով, կարելի է պահանջել, որ խնդիրը լուծեն միայն մեկ այլ եղանակով:

Տարրական դասարաններում գործող մաթեմատիկայի դասագրքերում որոշ խնդիրների համար նշվում է. «Լուծիր երկու եղանակով» կամ «Լուծիր տարբեր եղանակներով»: Կատարելով այդ պահանջը՝ երեխաները կամա թե ակամա կատարում են խնդրի լուծման ստուգում:

1. Տրված խնդրի հակադարձի կազմում և լուծում.

Տրված խնդրի հակադարձն այնպիսի խնդիր է, որում տրված խնդրի որոնելին հանդիսանում է հակադարձի հայտնի տվյալ, իսկ տրված խնդրի հայտնի տվյալներից մեկը հանդես է գալիս որպես անհայտ:

Օրինակ 1) Լիլիթը գնեց 12 տետր, որից 4-ը տվեց Լուսինեին: Քանի՞ տետր մնաց Լիլիթին: $(12 - 4 = 8)$

2) Լիլիթը գնեց 12 տետր: Մի քանի տետր Լուսինեին տալուց հետո նրա մոտ մնաց 8 տետր: Լիլիթը քանի՞ տետր տվեց Լուսինեին: $(12 - 8 = 4)$

Այս եղանակով պարզ խնդրի լուծումն ստուգելու համար աշակերտներին առաջարկվում է կազմել տրված խնդրի հակադարձը և այն լուծել: Իսկ եթե բաղադրյալ խնդիր է, ապա կազմել դրա որևէ հակադարձը և լուծել այն: Եթե ստացվի այն քիվն, որն հայտնի էր տրված խնդրում, ուրեմն խնդիրը ճիշտ է լուծված: Բերենք օրինակ:

Խնդիր: Դպրոցամերձ հողամասում աշխատում էին 23 տղա, նրանցից 7-ով՝ պակաս աղջիկներ: Ընդամենը քանի՞ տղա և աղջիկ էին աշխատում դպրոցամերձ հողամասում:

Լուծում

$$1) 23 - 7 = 16 \text{ (աղջիկ)}$$

$$2) 23 + 16 = 39 \text{ (տղա և աղջիկ)}$$

Պատ.՝ 39 տղա և աղջիկ

Հակադարձ խնդիրը կլինի

Դպրոցամերձ այգում աշխատում էին 39 տղա և աղջիկ: Աղջիկներից 7-ով՝ պակաս էին տղաներից: Քանի՞ տղա էր աշխատում այդ այգում:

Տղաների քիվը նշանակենք x -ով:

Լուծում

$$x + (x - 7) = 39$$

$$2x - 7 = 39$$

$$2x = 46$$

$$x = 23$$

Պատ.՝ 23 տղա:

Կազմենք մյուս հակադարձ խնդիրը.

Դպրոցամերձ այգում աշխատում էին 39 տղա և աղջիկ: Տղաները 23-ն էին: Աղջիկներից քանիստ՞ն էին պակաս տղաներից:

Լուծում

$$1) 39 - 23 = 16 \text{ (աղջիկ)}$$

Այս եղանակով խնդրի լուծման ստուգումն ունի իր բարդությունները: Եթե տրվածը պարզ խնդիր է, ապա հակադարձի կազմումը և լուծումը երեխաների համար առանձնակի դժվարություն չի ներկայացնում: Եթե պետք է կազմեն քաղաղրյալ խնդրի որևէ հակադարձը, ապա որպես անհաստ պետք է ընտրել տրված խնդրի այն քվային տվյալը, որի դեպքում հակադարձ խնդիր կազմելը և լուծելն առանձնակի դժվարություն չի ներկայացնի երեխաների համար:

Չպետք է կարծել, որ քոլոր լուծված խնդիրների ստուգումը պետք է կատարել այդ եղանակով: Միշտ չէ, որ նախապատահարձար է այն կիրառել, որովհետև հակադարձ խնդիրը կարող է լինել ավելի քարդ, քան ուղիղ խնդիրը, և բացի այդ պետք է լուծել նաև հակադարձ խնդիրը: Եշենք նաև, որ ուղիղ խնդիրը սխալ լուծելու դեպքում հակադարձ խնդրի լուծումը ևս կլինի սխալ, քանի որ ուղիղ խնդրի պատասխանը որպես տվյալ է հանդես գալիս հակադարձ խնդրում:

3. Խնդրի լուծման արդյունքում ստացած և պայմանում տրված քվերի միջև համապատասխանություն ստեղծելով:

Այս եղանակով խնդրի լուծումն ստուգելու համար ստացած քվերի հետ կատարվում են քվաքանական գործողություններ և եթե ստացվում է խնդրի պայմանում տրված քիվն, ապա խնդիրը ճիշտ է լուծված: Այդ եղանակը մեկնաբանենք խնդրի լուծման միջոցով:

Խնդիր: Խնձորենու աչրուց Անահիտը, Գայանեն և Ելենան քաղեցին 148 կգ խնձոր: Անահիտը և Գայանեն քաղեցին 98 կգ, Գայանեն և Ելենան՝ 90 կգ խնձոր: Խնձոր քաղողներից յուրաքանչյուրը քանի՞ կիլոգրամ խնձոր քաղեց:

- Լուծում
- | | |
|--------------------------|------------------------|
| 1) $98 + 90 = 188$ (կգ) | 3) $98 - 40 = 58$ (կգ) |
| 2) $188 - 148 = 40$ (կգ) | 4) $90 - 40 = 50$ (կգ) |
- Պատ.՝ քաղել են՝ Գայանեն՝ 40 կգ, Անահիտը՝ 58 կգ, Ելենան՝ 50 կգ:
Ստուգում՝ $40 + 58 + 50 = 148$ (կգ):

Խնդիրը ճիշտ է լուծված, քանի որ ստացած քվերը համապատասխանում են խնդրի պայմանում տրված քվերին:

Այս եղանակով խնդրի լուծման ստուգումը կարելի է կատարել 3-4-րդ դասարաններում:

4. Որոնելի մեծության բվային արժեքի սահմանների մոտավոր որոշում.

Այս եղանակի էությունն այն է, որ մինչև խնդրի լուծմանն անցնելը պարզվում է, թե ստացած պատասխանը պայմանում տրված որ բվից մեծ կամ փոքր պետք է լինի: Եթե ստացած պոլյունը չի համապատասխանում պայմանում տրված բվերի սահմանային արժեքներին, ուրեմն խնդիրը ճիշտ լուծված չէ: Մեկնաբանենք խնդրի միջոցով:

Խնդիր: Ա և Բ քաղաքներից, որոնց հեռավորությունը 750 կմ է, միաժամանակ իրար ընդառաջ սկսեցին շարժվել երկու ավտոմեքենա, որոնցից մեկի արագությունը 70 կմ/ժ էր, մյուսինը՝ 80 կմ/ժ: Մինչև հանդիպելը ավտոմեքենաներից յուրաքանչյուրը քանի՞ կիլոմետր ճանապարհ է անցել:

Լուծում

- | | |
|---------------------------|----------------------------|
| 1) $80 + 70 = 150$ (կմ/ժ) | 3) $80 \cdot 5 = 400$ (կմ) |
| 2) $750 : 150 = 5$ (ժ) | 4) $70 \cdot 5 = 350$ (կմ) |

Եթե երեխան $70 \cdot 5$ արտադրյալը (կամ $80 \cdot 5$) հաշվելիս թույլ է տվել սխալ $70 \cdot 5 = 3500$ (կմ), ապա նա պետք է զիտակցի, որ Ա և Բ քաղաքների միջև եղած հեռավորությունը 750 կմ է, ուստի ավտոմեքենաներից մեկի անցած ճանապարհը չի կարող դրանից ավելի լինել: Նշանակում է՝ առկա է սխալ հաշվարկ, ուստի նորից պետք է լուծել խնդիրը:

Խնդրի լուծումից և ստուգումից հետո նպատակահարմար է կատարել լրացուցիչ աշխատանք այդ խնդրի հետ: Այդ նպատակով կարելի է աշակերտներին առաջարկել, որպեսզի նրանք.

- փոխեն խնդրի հարցը և լուծեն խնդիրը,
- փոխեն որոշ տվյալներ և լուծեն ստացված խնդիրը,
- խնդիրը լուծեն այլ եղանակով,
- կազմեն խնդրի որևէ հակադարձ խնդիրը և այն լուծեն:

Քննարկենք որևէ խնդրի լուծում և դրա հետ տարվող աշխատանքները: Օրինակ, «Դավիթը գնեց 12 տետր, որոնցից 7-ը՝ մեկտողանի, մնացածը՝ վանդակավոր: Քանի՞ վանդակավոր տետր գնեց Դավիթը»:

Լուծում

$$12 - 7 = 5 \text{ (տ.)}$$

- Ինչպե՞ս կարելի է գրել այդ խնդրի լուծման տետրերի քանակը լինի 5(8, 9):

- Ինչպիսի՞ լուծում կունենա խնդիրը, եթե 10-ով (11-ով, 8-ով):

- Եթե 12-ը փոխարինենք 6-ով, խնդիրը որ, ապա ինչո՞ւ:

- Եթե վանդակավոր տետրերի քանակը լուծման համար ի՞նչ արտահայտություն ան

- կազմեք խնդրի որևէ հակադարձը և այլ

- խնդիրը լուծեք հավասարում կազմելու

Խնդրի հետ տարվող լրացուցիչ աշխատանքներից աշակերտներն լավ յուրացնեն մեծ

կախվածությունները, անցությունները, հար

մասին խոսվում է խնդրի տեքստում: Առան

թույն ունի այդպիսի աշխատանքի կատա

խնդիրների հետ, որոնք լուծվում են բազմ

թանք, քանի որ դրանք նպատարում են աշա

րել (ոչ բացահայտ կերպով) հասկացուց

առն համեմատական մեծությունների մաս

վոր է տրվում ֆունկցիայի մասին):

Խնդիր: Դավիթը 1 տետրի համար վճար

դրամ կվճարեր նույնպիսի 3 տետրի համար:

Խնդիր: Մայրիկն 8 լիտր կաթը հավասա

րաքանք ամաններում: Քանի՞ 2 լ-ոց աման

Եթե այս խնդրում 2 լ-ոց ամանները փո

խեցվել, ապա կստանանք 4 լ-ոց 2 աման: Տա

լի քանակը հակադարձ համեմատական են

խնդիրների լուծման, ստուգման հե

տեր եղանակները, փուլերը նախատեսվում

ուր պետք է իրականացնի աշակերտների

կամ աշակերտներն ինքնուրույն աշխատե

Համեմատական բաժանման վերաբերյալ խնդիրների ներմու-
 ժումը կարելի է կատարել նաև՝ լուծելով այդ թվանդակությամբ
 պատրաստի խնդիր:

Խնդիր: Լիլիթը և Լուսինեն գնացին շուկա: Նույն վաճառողից Լի-
 լիթը գնեց 3 կգ լոլիկ, Լուսինեն՝ նույն զնի 4 կգ: Գնումների համար
 նրանք միասին վճարեցին 630 դրամ: Աղջիկներից յուրաքանչյուրը
 որքա՞ն դրամ վճարեց իր գնումների համար:

Վերլուծության ժամանակ պետք է նշել, որ նրանք գնել են նույն
 զինն ունեցող լոլիկ:
 Լուծում

- 1) $3 + 4 = 7$ (կգ)՝ լոլիկ են գնել երկուսով միասին
 - 2) $630 : 7 = 90$ (դր.)՝ արժե 1 կգ լոլիկը
 - 3) $90 \cdot 3 = 270$ (դր.)՝ վճարել է Լիլիթը
 - 4) $90 \cdot 4 = 360$ (դր.)՝ վճարել է Լուսինեն
- Ստուգում՝ $270 + 360 = 630$ (դր.)

Հավասարում կազմելու համար ան-
 նշանակելով x -ով, կստանանք $x + 3x =$
 գրվում է

$$3x + 4x = 630$$

$$7x = 630$$

$$x = 90:$$

Ստուգում՝ $3 \cdot 90 = 270$ (դր.), $4 \cdot 90 = 360$
 $270 + 360 = 630$ (դր.):

§ 2.3. Շարժման վերաբերյալ

Շարժման վերաբերյալ խնդիրները
 լուծում ուսուցվող բնականական ասի տե-
 թոնցում ժամանակի, հեռավորության,
 ժամանակի միջև եղած ֆունկցիոնալ կապ
 պահանջվում է գտնել այդ մեծություն
 հայտնի են մյուս երկուսի բնական ասի
 շարժումը դիտվում է որպես հարթ
 տուն արագությամբ շարժում:

Տարրական դասարաններում մասն
մեծողիկայում համարյա այդ մեծություն
ներն առանձնացվում են որպես հատուկ
իրականում դրանք համեմատական և
խնդիրներ են: Այսպես՝ հեռավորություն
շարժման արագության և ժամանակի,
յուրաքանչյուրից արագությունը և ժամ
անատական են:

Մենք որոշեցինք այդ խնդիրներն աս-
 րակարգելու մեջ ստեղծված է պահանջ
 ընկնող ներկայացնում են հատուկ տեսակ
 նկատի ենք ունեցել, որ դրանց լուծումն ու
 հատկություններ:

Հավասարում կազմելու համար անհայտը՝ 1կգ լոլիկի գինը, նշանակելով x -ով, կառանանք՝ $x \cdot 3 + x \cdot 4 = 630$, որը սովորաբար գրվում է՝

$$3x + 4x = 630$$

$$7x = 630$$

$$x = 90:$$

Ատուզում՝ $3 \cdot 90 = 270$ (դր.), $4 \cdot 90 = 360$ (դր.) (կամ $90 \cdot 3 = 270$ (դր.), $90 \cdot 4 = 360$ (դր.)):

*Պատասխան՝ 1կգ-ը՝ 270 դրամ,
Լոլիկին՝ 360 դրամ:*

§ 2.3. Շարժման վերաբերյալ խնդիրներ

Շարժման վերաբերյալ խնդիրները տարրական դասարաններում ուսուցվող թվաբանական այն տեքստային խնդիրներն են, որոնցում ժամանակի, հեռավորության, արագության (որպես մեծությունների) միջև եղած ֆունկցիոնալ փոխկապակցության հիման վրա պահանջվում է գտնել այդ մեծություններից մեկի արժեքը, երբ հայտնի են մյուս երկուսի թվային արժեքները: Ընդ որում մարմնի շարժումը դիտվում է որպես հավասարաչափ շարժում (հաստատուն արագությամբ շարժում):

Տարրական դասարաններում մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայում հաճախ այդ մեծությունների հետ կապված խնդիրներն առանձնացվում են որպես հատուկ տիպի խնդիրներ: Սակայն իրականում դրանք համեմատական մեծությունների վերաբերյալ խնդիրներ են: Այսպես հեռավորությունն ուղիղ համեմատական է շարժման արագությանը և ժամանակին, իսկ հաստատուն հեռավորության դեպքում արագությունը և ժամանակը հակադարձ համեմատական են:

Մենք որոշեցինք այդ խնդիրներն առանձին բնարկել, քանի որ դասվարների մեջ ստեղծված է այնպիսի սովորություն, որ դրանք իրենցից ներկայացնում են հատուկ տիպի խնդիրներ: Բացի այդ մենք նկատի ենք ունեցել, որ դրանք լուծումն ունի նաև որոշակի առանձնահատկություններ:

Հարժման վերաբերյալ խնդիրների ուսուցման համար պետք է կատարել որոշակի նախապատրաստական աշխատանք: Այդ նպատակով կարելի է քննարկել այնպիսի խնդիրներ, որոնցում պահանջվում է գտնել ճարմնի անցած հեռավորությունների գումարը (տարբերությունը):

խնդիր: Ջրոսաշրջիկն ասաջին օրն անցավ 25 կմ ճանապարհ երկրորդ օրը՝ 5 կմ-ով պակաս: Այդ երկու օրում զրոսաշրջիկը քանի՞ կիլոմետր ճանապարհ անցավ:

Առանց «արագություն» տերմինի օգտագործման կարելի է քննարկել հետևյալ քվանդակությամբ խնդիրներ.

1) Ավտոմեքենան 3 ժ-ում անցել է 180 կմ ընդ որում յուրաքանչյուր ժամում անցնելով հավասար հեռավորություն: Յուրաքանչյուր ժամում քանի՞ կիլոմետր ճանապարհ է անցել ավտոմեքենան:

2) Հեծանվորդը 2 ժ-ում անցել է 30 կմ, ընդ որում յուրաքանչյուր ժամում անցել է հավասար հեռավորություն: Քանի՞ կիլոմետր ճանապարհ նա կանցնի 4 ժ-ում, եթե յուրաքանչյուր ժամում անցնի հավասար հեռավորություն:

Այդպիսի խնդիրների լուծումը լավ հիմքեր է ստեղծում «արագություն» հասկացության ներմուծման համար: Սովորաբար այդ հասկացությունը դժվար է ընկալվում աշակերտների կողմից, քանի որ այն ֆիզիկական մեծություն է, որն իրար է կապում այնպիսի մեծություններ, ինչպիսին են հեռավորությունը և ժամանակը:

Մինչև շարժման վերաբերյալ խնդիրների ուսուցման անցնելը պետք է աշակերտների մեջ ձևավորել «արագություն» հասկացությունը: Այդ նպատակով պետք է օգտվել երեխաների կյանքի փորձից և զորձնական ու զենակյան մեթոդներից: Երեխաներն իրենց առօրյա խոսակցության ժամանակ հաճախ են զորձանում «արագ», «դանդաղ» բառերը՝ չհասկանալով, դր դրանք կապված են արագության հետ:

Հարժման մասին աշակերտների ունեցած պատկերացումները, գիտելիքները ամփոփելու, ամրապնդելու և դրանք հետագայում կիրառելու նպատակով կարելի է կազմակերպել էքսկուրսիա, որի ընթացքում նրանք կդիտեն մեքենաների, մարդկանց արագ, դանդաղ, միևնույն և տարբեր ուղղությամբ շարժումները:

«Արագություն» հասկացությունը քննարկել աշակերտներին արդեն 3-րդ դասարձակ խնդիր:

«Գնացքը, յուրաքանչյուր ժամում քայլում, 3 ժամում անցավ 120 կմ: Քանի՞ ժամում կարող է անցնել յուրաքանչյուր ժամում»:

Մեկնաբանվում է, որ գնացքը ճանաչանալով անցել է 120 կմ: 3 ժ-ում յուրաքանչյուր ժամում անցել է 120 կմ-ը, այդ ժամանակահատվածում աշակերտների կողմից լավ ցուցանելու նպատակով պետք է գծել հետևյալ լուծման մոդելը.



Այնուհետև ուսուցիչը հարցնում է, քանի՞ ժամում գնացքի անցած ճանապարհը օժտված է ուսուցչի օգնությունից՝ եթե պետք է բաժանել 3 հավասար մասերում: 10-ում գնացքն անցնում է 40 քայլում: Նշվում է, որ քննարկվող խնդիրը պետք է լուծել այսպես. «Ի՞նչ արագությամբ է կարող անցնել յուրաքանչյուր ժամում է, որ հայտնի ժամանակը և հեռավորությունը գտնելու համար պետք է համարել վրա: Եթե հեռավորությունը 10-ով արագությունը՝ V-ով, ապա V=10»:

Քննարկելով ևս 1-2 նմանատիպ «արագություն» հասկացությունը:

Մեկ ժամում (րոպեում կամ վայրկյանում) անվանում են արագության մեծությունները:

«Արագություն» հասկացությունը ներմուծելու համար պետք է ըննարկել աշակերտներին արդեն ծանոթ բովանդակությամբ որևէ պարզ խնդիր:

«Գնացքը, յուրաքանչյուր ժամում անցնելով հավասար հեռավորություն, 3 ժամում անցավ 120 կմ: Քանի՞ կիլոմետր անցավ գնացքը յուրաքանչյուր ժամում»:

Մեկնաբանվում է, որ գնացքը ճանապարհին եղել է 3 ժամ և այդ ժամանակում անցել է 120 կմ: 3 ժ-ը գնացքի ճանապարհին գտնվելու ժամանակն է, իսկ 120 կմ-ը այդ ժամանակամիջոցում անցած ճանապարհն է (կամ հեռավորությունն է): Խնդրի բովանդակությունն աշակերտների կողմից լավ ընկալելու և լուծման ուղիներ որոնելու նպատակով պետք է գծել համապատասխան գծագիր (կառուցել լուծման մոդելը):



Այնուհետև ուսուցիչը հարցնում է, թե ինչպես կարող ենք իմանալ 1ժ-ում գնացքի անցած ճանապարհը (հեռավորությունը): Օգտվելով գծագրից և ուսուցչի օգնությունից՝ երեխաներն ասում են, որ 120-ը պետք է բաժանել 3 հավասար մասի՝ $120 : 3 = 40$ (կմ/ժամում): Ուրեմն 1ժ-ում գնացքն անցնում է 40 կմ, որին անվանում են արագություն: Նշվում է, որ ըննարկվող խնդրի հարցը կարելի է ձևակերպել այսպես. «Ի՞նչ արագությամբ էր շարժվում գնացքը»: Պարզվում է, որ հայտնի ժամանակի և հեռավորության միջոցով արագությունը գտնելու համար պետք է հեռավորությունը բաժանել ժամանակի վրա: Եթե հեռավորությունը նշանակենք S-ով, ժամանակը՝ t-ով, արագությունը՝ V-ով, ապա $V = S : t$:

Քննարկելով ևս 1-2 նմանատիպ խնդիրներ՝ ընդհանրացվում է «արագություն» հասկացությունը:

Մեկ ժամում (րոպեում կամ վայրկյանում) մարմնի անցած հեռավորության անվանում են արագություն:


Արագության միավորները գրվում են կմ/ժ, մ/ր, մ/վ, կմ/վ և այլն։ Մեզ հայտնի է, որ արագությունը ժամանակի մեկ միավորում մարմնի անցած հեռավորությունն է։ Ասկայն կրտսեր դպրոցականների համար մատչելի է վերոնշյալ մեկնաբանությունը։

Ճեավորություն, ժամանակ, արագություն մեծությունների միջև եղած կապերի մեկնաբանման համար պետք է քննարկել պարզ խնդիրներ։

«Ճեւտիտունը, շարժվելով 5 կմ/ժ արագությամբ, ճանապարհն անցավ 3 ժ-ում։ Քանի՞ կիլոմետր ճանապարհ նա անցավ»։

Սովորաբար շարժման վերաբերյալ խնդիրների համատեղաբույնը տրվում է կամ աղյուսակի կամ գծագրի (հատվածների) տեսքով։

Արագություն (V)	Ժամանակ (t)	Ճեւավորություն (S)
5 կմ/ժ	3ժ	?կմ



Խնդրի վերլուծման քննաքննում պարզվում է, որ հեւտիտունը, յուրաքանչյուր ժամում անցնելով 5 կմ, 3 ժամում կանցնի 3 անգամ ավել ճանապարհ։ Ուղեմն հեւտիտունի անցած ճանապարհը գտնելու համար պետք է 5 կմ-ը բազմապատկել 3-ով՝ $5 \cdot 3 = 15$ (կմ)։ Պետք է աշակերտների գիտակցությանը հասցնել արագության և հեւավորության միավորների գրասման տարբերությունները։ Ընդհանրացնելով խնդիր լուծումը՝ ուսուցիչն ասում է, որ հայտնի արագության և ժամանակի միջոցով անհայտ հեւավորությունը գտնելու համար պետք է արագությունը բազմապատկել ժամանակով՝ $S = V \cdot t$ ։

Որպեսզի աշակերտները լավ յուրացնեն այդ երեք մեծությունների փոխկապակցությունը, նպատակահարմար է քննարկել երեք փոխակապարծ խնդիրներ, սովյալներն ու անհայտը ներկայացնել աղյուսակի տեսքով։

Արագություն (V)
5 կմ/ժ
?
5 կմ/ժ

Մեկնաբանելով աղյուսակը լուծումները տուրք $S = V \cdot t$ ։

Տարբական դասում հանդիսանալուց և հանարի լավ խնդիրներ։ Այդ խնդիր մեւակներ՝ կապարծ տուրք

1) Տրված են շարժելու լուծել և ժամանակը։ Պետք է

2) Տրված են շարժելու լուծել և անցած հեւավորությունը անցնելու ժամանակը

3) Տրված են ժամանակը անցնելու արագությունը և աղյուսակը։

Ըստծման վերաբերյալ հանդիսանալու ժամանակում լուծումներ։ «Ժամանակը քայքայումների, որոնց հիսալուծումը։ Քննարկելուց վերաբերյալ»

Խնդիր։ Ա և Ը քայքայումը հանդիսանալու երկու անգամ անցնելուց անցնելու արագությունը։

Վերլուծության լուծարքը դասումը «Ժամանակը քայքայումը միաժամանակ (նույն) ժամանակում երեք են անցնելու մասում ասված է, որ

Արագություն (V)	Ժամանակ (t)	Հեռավորություն (S)
5 կմ/ժ	3 ժ	?
?	3 ժ	15 կմ
5 կմ/ժ	?	15 կմ

Մեկնաբանելով աղյուսակում համառոտագրված խնդիրները և դրանց լուծումները՝ տրվում են հետևյալ բանաձևերը.

$$S=V \cdot t, \quad V=S : t, \quad t=S : V :$$

Տարրական դասարաններում հիմնականում քննարկվում են հանդիսակազմ և հակադիր ուղղություններով շարժման վերաբերյալ խնդիրներ: Այդ խնդիրներից յուրաքանչյուրն ունի երեք ենթատեսակներ՝ կապված տվյալներից և անհայտներից: Դրանք են.

1) Տրված են շարժվող մարմիններից յուրաքանչյուրի արագությունը և ժամանակը: Պետք է գտնել դրանց անցած ճանապարհը:

2) Տրված են շարժվող մարմիններից յուրաքանչյուրի արագությունը և անցած հեռավորությունը: Պետք է գտնել այդ հեռավորությունն անցնելու ժամանակը:

3) Տրված են ժամանակը, հեռավորությունը և շարժվող մարմիններից մեկի արագությունը: Պետք է գտնել մյուս մարմնի շարժման արագությունը:

Շարժման վերաբերյալ խնդիրների տեստերում հաճախ ենք հանդիպում «հանդիսակազմ շարժում», «հակադիր ուղղություններով շարժում», «միաժամանակ շարժվեցին» և այլ բառակապակցությունների, որոնց իմաստը պետք է լավ մեկնաբանվի աշակերտներին: Քննարկենք վերոնշյալ տիպի խնդիրների լուծումը.

Խնդիր: Ա և Բ քաղաքներից միաժամանակ սկսեցին շարժվել իրար հանդեպ երկու ավտոմեքենա և 3 ժամ հետո հանդիպեցին: Ավտոմեքենաներից մեկի արագությունը 60 կմ/ժ էր, մյուսինը՝ 70 կմ/ժ: Գտնել Ա և Բ քաղաքների միջև հեռավորությունը:

Վերլուծության ընթացքում ընդգծված ուշադրություն պետք է դարձնել «միաժամանակ» հասկացությանը: Եթե ավտոմեքենաները միաժամանակ (նույն ժամին) են սկսել շարժվել, ապա դրանք ճանապարհին եղել են հավասար ժամանակամիջոցում: Խնդրի պայմանում ասված է, որ նրանք հանդիպել են շարժումը սկսելուց 3

ժամ հետո: Դա նշանակում է, որ ավտոմեքենաներից յուրաքանչյուրը շարժման մեջ է եղել 3 ժամ:

- Եթե հայտնի է ավտոմեքենաներից յուրաքանչյուրի արագությունը և ճանապարհին գտնվելու ժամանակը, կարո՞ղ ենք գտնել դրանցից յուրաքանչյուրի անցած ճանապարհը: (Այո՞, դրա համար պետք է արագությունը բազմապատկել ժամանակով):

1) $60 \cdot 3 = 180$ (կմ)՝ առաջին մեքենայի անցած ճանապարհը


2) $70 \cdot 3 = 210$ (կմ)՝ երկրորդ մեքենայի անցած ճանապարհը

- Այժմ կարո՞ղ ենք իմանալ Ա և Բ քաղաքների միջև հեռավորությունը: (Այո՞, դրա համար պետք է իրար գումարել երկու մեքենաների անցած ճանապարհները):

3) $180 + 210 = 390$ (կմ)

Պատասխան՝ 390 կմ

Այս խնդրի վերլուծության ժամանակ կարելի է կատարել գծագիր.



Պետք է մեկնաբանել, որ հանդիպման վայրում նկարվում է դրոշ, իսկ մեքենաները պատկերվում են պարի տեսքով, որոնց վրա գրվում է դրանց արագությունները, ընդ որում պարերի երկարությունները լինում են տարբեր, եթե արագությունները տարբեր են: Անժ արագությունը պատկերվում է ավելի երկար պարով:

Հարց է ծագում՝ նշված խնդրի լուծման ընթացքում պե՞տք է օգտվել $S = V \cdot t$ բանաձևից: Այո, պետք է, սակայն նախտախառնար չէ գրել.

$V_1 = 60$ կմ/ժ $V_2 = 70$ կմ/ժ

$t = 3$ ժ $t = 3$ ժ

$S = ?$ կմ $S = ?$ կմ

խնդիր: Ա և Բ քաղաքների միջև հեռավորությունը 480 կմ է, միաժամանակ իրար ընդառնվելու ավտոմեքենա, որոնցից մեկի արագությունը՝ 70 կմ/ժ: Քանի՞ ժամից հետո նրանց կհանդիպեն:

Մեկնաբանվում է, որ ավտոմեքենաները անցած են լինում 390 կմ: Եստե՞սում այդ երկու մեքենան միասին քանի կմ անցած են:

1) $60 + 70 = 130$ (կմ)

Այնուհետև, եթե անցած ճանապարհը ժամում անցած հեռավորությանը (արագության) բազմապատկենք ժամը՝ կստանանք ընդամենը անցած ճանապարհը: $t = S : V$ բանաձևի մասին արդեն խոսելուց:

2) $390 : 130 = 3$ (ժ)

խնդիր: Ա և Բ քաղաքներից միայն մեկը շարժվել «Կոլգայ» և «Ժիզուլի» մեքենաներով: Ա և Բ քաղաքների միջև հեռավորությունը 3 ժամ հետո այդ ավտոմեքենաները հանդիպելու են: Կարո՞ղ ենք գտնել «Կոլգայի» արագությունը:

	V	t
«Կ»	90 կմ/ժ	3 ժ
«Ժ»	?	3 ժ

Ձեռնարկ

1) $90 \cdot 3 = 270$ (կմ)

2) $480 - 270 = 210$ (կմ)

3) $210 : 3 = 70$ (կմ)

խնդիր: Ա և Բ քաղաքներից հեռավորությունը 480 կմ է, միաժամանակ իրար ընդառնվելու ավտոմեքենաներ, որոնցից մեկի արագությունը՝ 70 կմ/ժ: Կարո՞ղ ենք գտնել մյուսի արագությունը:

Խնդիր: Ա և Բ քաղաքների միջև հեռավորությունը 390 կմ է: Այդ քաղաքներից միաժամանակ իրար ընդառաջ սկսեցին շարժվել երկու ավտոմեքենա, որոնցից մեկի արագությունը 60 կմ/ժ է, մյուսինը՝ 70 կմ/ժ: Քանի՞ ժամից հետո նրանք կհանդիպեն իրար:

Մեկնաբանվում է, որ ավտոմեքենաների հանդիպման պահին նրանք անցած են լինում 390 կմ: Եսիս պետք է իմացվի, թե 1 ժամում այդ երկու մեքենան միասին քանի կիլոմետր են անցնում.

$$1) 60 + 70 = 130 \text{ (կմ)}$$

Այնուհետև, եթե անցած ճանապարհը բաժանենք նրանց մեկ ժամում անցած հեռավորությանը (արագության), կիմանանք, թե քանի ժամ հետո են ավտոմեքենաները հանդիպել: Այստեղ պետք է օգտվել $t = S : V$ բանաձևի մասին աշակերտների ունեցած գիտելիքներից:

$$2) 390 : 130 = 3 \text{ (ժ)}$$

Պատասխան՝ 3 ժամ հետո:

Խնդիր: Ա և Բ քաղաքներից միաժամանակ իրար ընդառաջ սկսեցին շարժվել «Կոլգա» և «Ժիզուլի» մակնիշի ավտոմեքենաներ: Ա և Բ քաղաքների միջև հեռավորությունը 480 կմ է: Շարժումն սկսելուց 3 ժամ հետո այդ ավտոմեքենաները հանդիպեցին իրար: Իմանալով, որ «Կոլգայի» արագությունը 90 կմ/ժ է, գտնել «Ժիզուլի» արագությունը:

	V	t	S
Կ.	90 կմ/ժ	3 ժ	?
Ջ.	?	3 ժ	?


Լուծում

- 1) $90 \cdot 3 = 270 \text{ (կմ)}$
- 2) $480 - 270 = 210 \text{ (կմ)}$
- 3) $210 : 3 = 70 \text{ (կմ)}$

Պատասխան՝ 70 կմ/ժ:

Խնդիր: Ա և Բ քաղաքներից, որոնց միջև հեռավորությունը 480 կմ է, միաժամանակ իրար ընդառաջ սկսեցին շարժվել «Կոլգա» և «Ժիզուլի» մակնիշի ավտոմեքենաներ և 3 ժ հետո հանդի-

վեցին իրար: Իմանալով, որ «միգուլիի» արագությունը 70 կմ/ժ է, գտնել «Կոլգայի» արագությունը:




Լուծում

- 1) $70 \cdot 3 = 210$ (կմ)
- 2) $480 - 210 = 270$ (կմ)
- 3) $270 : 3 = 90$ (կմ/ժ)

Պատասխան՝ 90 կմ/ժ

Հանդիպակաց շարժման վերաբերյալ խնդիրները ևս կարելի է հաշվել որպես հակադիր ուղղությամբ մարմինների շարժում, մանավանդ եթե ընդունենք, որ հանդիպումից հետո մարմինները շարունակում են շարժվել: Սակայն մենք կքննարկենք այնպիսի խնդիրներ, որոնցում մարմիններն ի սկզբանե հակադիր ուղղությամբ են շարժվում:

Խնդիր: Ավտոկայանից հակադիր ուղղությամբ միաժամանակ սկսեցին շարժվել երկու ավտոմեքենա: Դրանցից մեկի արագությունը 50 կմ/ժ էր, մյուսինը՝ 60 կմ/ժ: Միմյանցից ի՞նչ հեռավորության վրա կգտնվեն ավտոմեքենաները 4 ժամ հետո:



Սեկնաբանվում է, որ հայտնի են ավտոմեքենաներից յուրաքանչյուրի արագությունը: Հայտնի է նաև ժամանակը: Խնդիրը լուծելու համար նախ պետք է իմանալ, թե 4 ժ-ում ավտոմեքենաներից յուրաքանչյուրը քանի կիլոմետր է անցել.

- 1) $50 \cdot 4 = 200$ (կմ)
- 2) $60 \cdot 4 = 240$ (կմ):

Այնուհետև գումարելով ստացվում է հետո միմյանցից ինչ հեռավորության վրա:


$$3) 200 + 240 = 440 \text{ (կմ)}$$

Եթե կազմենք արտահայտություն, թե 1 ժամում ավտոմեքենաները անցնում.

$$50 + 60 = 110 \text{ (կմ):}$$

Ուրեմն 4 ժամում իրարից կհեռան Այս դատողությունները պետք է մի քանի արտահայտությունը՝ $(50 + 60) \cdot 4 =$

Խնդիր: Ավտոկայանից հակադիր ուղղությամբ սկսեցին շարժվել երկու ավտոմեքենա: Դրանցից մեկի արագությունը 440 կմ էր, մյուսինը՝ 60 կմ/ժ: Միմյանցից ի՞նչ հեռավորության վրա կգտնվեն ավտոմեքենաները 4 ժամ հետո:



Լուծում

- 1) $60 \cdot 4 = 240$ (կմ)
- 2) $440 + 240 = 680$ (կմ)
- 3) $680 : 4 = 170$ (կմ/ժ)

Խնդիր: Ավտոկայանից հակադիր ուղղությամբ սկսեցին շարժվել երկու ավտոմեքենա: Դրանցից մեկի արագությունը 440 կմ էր, մյուսինը՝ 60 կմ/ժ: Քանի՞ ժամից հեռավորություն կլինի 440 կմ:

70 կմ/ժ է.



90 կմ/ժ
արեւելի է
մաս, մա-
նակը շա-
մապիսի
ուղղու-
մանակ
ուղղու-
թյան



յուրա-
նից լու-
մաներից

Անուհետև զուգարելով ստացած արդյունքները՝ կիմանանք, թե 4 ժ հետո միմյանցից ինչ հեռավորության վրա կգտնվեն ավտոմեքենաները.

3) $200 + 240 = 440$ (կմ)

Եթե կազմենք արտահայտություն, ապա նախ պետք է պարզենք, թե 1 ժամում ավտոմեքենաներն իրարից ինչքան են հեռանում.

$50 + 60 = 110$ (կմ):


Ուրեմն 4 ժամում իրարից կհեռանան՝ $110 \cdot 4 = 440$ (կմ):

Այս դատողությունները պետք է կատարել մտքում և միանգամից զոնել արտահայտությունը՝ $(50 + 60) \cdot 4$:

$(50 + 60) \cdot 4 = 110 \cdot 4 = 440$ (կմ)

Պատասխան՝ 440 կմ:

Խնդիր: Ավտոկայանից հակադիր ուղղությամբ միաժամանակ սկսեցին շարժվել երկու ավտոմեքենա: 4 ժ հետո նրանց միջև եղած հեռավորությունը 440 կմ էր: Չունել ավտոմեքենաներից մեկի արագությունը, եթե մյուսի արագությունը 60 կմ/ժ է:



$t = 4\text{ժ}$ 440 կմ

Լուծում

- 1) $60 \cdot 4 = 240$ (կմ)
- 2) $440 - 240 = 200$ (կմ)
- 3) $200 : 4 = 50$ (կմ/ժ)

Պատասխան՝ 50 կմ/ժ:


Խնդիր: Ավտոկայանից հակադիր ուղղությամբ միաժամանակ սկսեցին շարժվել երկու ավտոմեքենա, մեկի արագությունը 50 կմ/ժ է, մյուսինը՝ 60 կմ/ժ: Քանի՞ ժամից հետո նրանց միջև եղած հեռավորությունը կլինի 440 կմ:

Լուծում

- 1) $50 + 60 = 110$ (կմ/ժ)
- 2) $440 : 110 = 4$ (ժ)

Պատասխան՝ 4 ժամ հետո:

Խնդիր: Ա քաղաքից դեպի Բ քաղաք 12 կմ/ժ արագությամբ սկսում է շարժվել հեծանվորդը: 2 ժ հետո Ա-ից դեպի Բ է սկսում շարժվել երկրորդ հեծանվորդը 18 կմ/ժ արագությամբ: Քանի՞ ժամից հետո երկրորդ հեծանվորդը կհասնի առաջին հեծանվորդին:



Լուծում

1. Մինչև երկրորդ հեծանվորդի Ա քաղաքից դուրս գալը քանի՞ կիլոմետր ճանապարհ է անցնում առաջին հեծանվորդը.

$$12 \cdot 2 = 24 \text{ (կմ):}$$

2. Երկրորդ հեծանվորդը մեկ ժամում քանի՞ կիլոմետր է ավելի անցնում առաջին հեծանվորդից (երկրորդ հեծանվորդի արագությունն ինչքանո՞վ է մեծ առաջինի արագությունից).

$$18 - 12 = 6 \text{ (կմ) (կամ } 6 \text{ կմ/ժ)}$$

3. Քանի՞ ժամից հետո երկրորդ հեծանվորդը կհասնի առաջինին.

$$24 : 6 = 4 \text{ (ժ)}$$


Պատասխան՝ 4 ժ հետո:

§ 3. Երկու տարբերությամբ շարժվող օբյեկտների հանդիպում

Այս տիպի խնդիրների ներմուծման ժամանակահատվածը կարելի է անվանել խնդիրներ: Օրինակ՝

- 1) Լիլիթը գնաց 3 խաղալիք: Լուսինն ավելի շատ դուրս է վճարել գնումները:
- 2) Դավիթը և Արմենը գնեցին նույն գնով 3 տետր ավելի էր գնել և 60 դրամ փոքր: Ի՞նչ արժե 1 տետրը:

Այս խնդրի լուծումն առանձնապես կարևոր է հասկանալու համար՝ $60 : 3 = 20$ և այդպես հետո կատարելիքը կլինի $20 \cdot 3 = 60$ դրամ: Արմենը նույն գնով 5 տետր է գնել 60 դրամ ավելի վճարեց: Գնումներից որքան դրամ վճարեց Լուսինն, լուծման համար կարելի է օգտվել երեխաներին հեշտությամբ կատարվող գործողություններից:



Լուծում

- 1) $5 - 2 = 3$
- 2) $60 : 3 = 20$
- 3) $20 \cdot 2 = 40$
- 4) $20 \cdot 5 = 100$

Այս խնդրի լուծման ընթացքում անհրաժեշտ է հասկանալ խնդիրը: Պետք է հասկանալ, որ Արմենը 3 տետր ($5 - 2 = 3$) և

§ 3. Երկու տարբերությամբ անհայտը գտնելու վերաբերյալ խնդիրներ

Այս տիպի խնդիրների ներմուծման համար որպես նախապատրաստական աշխատանք կարելի է առաջադրել հարցեր և լուծել պարզ խնդիրներ: Օրինակ՝

- 1) Կլիթը գնեց 3 խաղալիք, և տսինեն 5 նույնաիսի խաղալիք: Ո՞վ ավելի շատ գումար է վճարել գնումների համար:
- 2) Դավիթը և Արմենը գնեցին նույն գինն ունեցող տետրեր: Արմենը 3 տետր ավելի էր գնել և 60 դրամ ավելի էր վճարել, քան Դավիթը: Ի՞նչ արժե 1 տետրը:

Այս խնդրի լուծումն առանձնակի դժվարություն չի ներկայացնում աշակերտների համար՝ $60 : 3 = 20$ (դր.): Այդ խնդիրը ձևափոխելուց հետո կատարվի քննարկվող տիպի խնդիր. «Դավիթը գնեց 2 տետր, Արմենը՝ նույն գնով 5 տետր: Արմենը տետրերի համար Դավիթից 60 դրամ ավելի վճարեց: Գնումների համար տղաներից յուրաքանչյուրը որքա՞ն դրամ վճարեց»:

Խնդրի լուծման համար կարելի է կատուցել հետևյալ մոդելը, որը կօգնի երեխաներին հեշտությամբ կազմել լուծման պլանը:



Լուծում

- 1) $5 - 2 = 3$ (տ.)
- 2) $60 : 3 = 20$ (դր.)
- 3) $20 \cdot 2 = 40$ (դր.)
- 4) $20 \cdot 5 = 100$ (դր.)

Պատ.՝ Դավիթը 40 դրամ
Արմենը՝ 100 դրամ:

Այս խնդրի լուծման ընթացքում պետք չէ աշակերտներին ասել, թե որ տիպի խնդիր է: Պետք է նրանց գիտակցությանը հասցնել այն, որ Արմենը 3 տետր ($5 - 2 = 3$) ավելի է գնել, որոնց համար

վճարել է 60 դրամ: Ուրեմն 1 տետրի գինն իմանալու համար պետք է 60-ը բաժանել 3-ի, քանի որ տետրերն ունեն նույն գինը:

Ղափարի համար պետք է պարզ լինի երկու տարբերությունը.

ա) տետրերի քանակների տարբերությունը՝ $5 - 3 = 2$,

բ) վճարված գումարի տարբերությունը՝ 60 դրամը:


Չնդհանրապես տարրական դասարաններում երկու տարբերությամբ անհայտը գտնելու վերաբերյալ խնդիրներից քննարկվում են հետևյալ տիպի խնդիրներ.

1) Տրված են քանակի երկու արժեքները, քանակներին համապատասխան արժեքների տարբերությունը: Հաստատուն գնի դեպքում պահանջվում է գտնել արժեքները: Քննարկված խնդրում քանակի երկու արժեքներն են 2 տ. և 5 տ.: Քանակներին համապատասխան արժեքների տարբերությունը 60 դրամ է: Հաստատուն է տետրերի գինը: Այդ քանակությունների համար գնումների արժեքներն են 40 դրամ և 60 դրամ:

2) Տրված են երկու մեծությունների քանակների տարբերությունը, այդ մեծությունների արժեքները: Հաստատուն գնի դեպքում պետք է գտնել քանակների թիվը:

Խնդիր: Լիլիթը և Լուսինեն խանութից գնեցին նույն գնանոց գործվածք: Լիլիթը գնած գործվածքի համար վճարեց 1000, Լուսինեն՝ 1500 դրամ: Իմանալով, որ Լուսինեն 2 մ ավելի գործվածք է գնել, որոշել, թե աղջիկներից յուրաքանչյուրը քանի մետր գործվածք է գնել:

Այս խնդրում երկու մեծությունների արժեքներն են՝ 1000 դրամ և 1500 դրամ: Այդ մեծությունների քանակների տարբերությունը 2 մ-ն է:



Լուծում

1) $1500 - 1000 = 500$ (դր.)՝ վճարել է Լուսինեն 20-ի համար

2) $500 : 2 = 250$ (դր.)՝ 1 մ գործվածքի գինը

3) $1000 : 250 = 4$ (մ)՝ Լիլիթի գնած քանակը
4) $1500 : 250 = 6$ (մ) (կամ $4 + 2 = 6$)՝ Լուսինեի գնած քանակը

Այս տիպի խնդիրներում կարող է քանակ արժեք մեծությունները, այլ մեծություններ՝ արագություն, ժամանակ ևն. **Խնդիր:** երկու գնացքներ շարժվում են միևնույն ուղիով: Երկրորդը 4 ժամ ավելի անցնում է 120 կմ ճանապարհ: Գնացքներից յուրաքանչյուրի արագությունը որոշել:

Խնդիր: երկու գնացքներ շարժվում են միևնույն ուղիով: Երկրորդը 4 ժամ ավելի անցնում է 120 կմ, երկրորդի արագությունը քանի՞ անգամ է գտնվել առաջինի արագությանը:

§ 4. Երկրաչափական խնդիրներ

Մարմնատիկայի տարրական դասարաններում ուսուցվում է քվարանական եռանկյան և այնպիսի ժամեր, որոնց հիմնական է կողմի ուսուցումն է, որը ևս ուղիով ճարտական դասարաններում ուսուցանվող խնդիրները կարելի է քննարկել խնդիրներ, որոնցում պահանջվում է գտնել անհայտը:

1. խնդիրներ, որոնցում պահանջվում է գտնել անհայտը:
2. խնդիրներ, որոնցում պահանջվում է գտնել անհայտը:
3. խնդիրներ, որոնցում պահանջվում է գտնել անհայտը:

- 3) $1000 : 250 = 4$ (մ)՝ Լիլիթի գնած գործվածքի քանակը
 4) $1500 : 250 = 6$ (մ) (կամ $4 + 2 = 6$ (մ)) Լուսինեի գնած գործվածքի քանակը

*Պատ.՝ Լիլիթը՝ 4 մետր,
 Լուսինեն՝ 6 մետր:*

Այս տիպի խնդիրներում կարող են հանդես գալ ոչ միայն զին, քանակ, արժեք մեծությունները, այլ նաև ուրիշ համեմատական մեծություններ՝ արագություն, ժամանակ, հեռավորություն:

Խնդիր: Երկու գնացքներ, շարժվելով միևնույն արագությամբ, ճանապարհին եղան՝ առաջինը 4 ժամ, երկրորդը՝ 6 ժամ: Ընդ որում առաջին գնացքը 80 կմ ճանապարհ քիչ է անցել, քան երկրորդ գնացքը: Գնացքներից յուրաքանչյուրն ի՞նչ հեռավորություն է անցել:

Խնդիր: Երկու գնացքներ շարժվում են միևնույն արագությամբ: Գնացքներից մեկը ճանապարհին եղել է 2 ժ շատ, քան մյուսը: Առաջին գնացքն անցել է 120 կմ, երկրորդը՝ 180 կմ: Գնացքներից յուրաքանչյուրը քանի՞ ժամ է գտնվել ճանապարհին:

§ 4. Երկրաչափական բովանդակությամբ խնդիրներ

Մաթեմատիկայի տարրական դասընթացում երկրաչափական նյութն ուսուցվում է թվաքանակական նյութի հետ համատեղ, սակայն կան այնպիսի ժամեր, որոնց հիմնական նպատակը երկրաչափական նյութի ուսուցումն է, որը ևս ուղեկցվում է խնդիրներ լուծելով:

Տարրական դասարաններում ուսուցվող երկրաչափական բովանդակությամբ խնդիրները կարելի է տրոհել խմբերի.

1. խնդիրներ, որոնցում պահանջվում է ճանաչել, անվանել, առանձնացնել պատկերներ,
2. խնդիրներ, որոնցում պահանջվում է չափել, գծել, կառուցել այս կամ այն երկրաչափական պատկերը,
3. խնդիրներ, որոնցում պահանջվում է ձևափոխել պատկերը, դասակարգել ստացած պատկերները, համեմատել պատկերները.

4. խնդիրներ, որոնց լուծման համար պահանջվում է կատարել հաշվումներ, գործողություններ:

Ակառն առաջին դասարանից՝ երեխաները ծանոթանում են երկրաչափական պատկերներին, մարմիններին, անվանում են դրանք տարբերում, համեմատում են: Սովորում են գծել (առանց գործիքի շրջան, քառակուսի, ուղղանկյուն, եռանկյուն: Երբ աշակերտները պատկերացում են ստանում հատվածի մասին, նրանք քանոնի օգնությամբ չափում են հատվածների երկարությունները, կատարում տրված երկարության հատված և այլն: Ավելի համախոս երեխաները հանդիպում են այնպիսի խնդիրների, որոնցում պահանջվում է կատարել որոշակի պատկերների կատարում:

1) Չափիր տրված հատվածների երկարությունները և համեմատիր արդյունքները:

2) Տրված հատվածը մեծացրո՛ւ 2 սմ-ով:

3) Կատուցիր տրված հատվածից 2 անգամ երկար հատված:

4) Գծիր 3 սմ երկարություն ունեցող չափակողը շրջանագիծ:

5) Կանոնակալոր թղթի վրա գծիր 2 սմ և 3 սմ երկարությամբ կողմերով ուղղանկյուն:

6) Կանոնակալոր թղթի վրա գծիր ընդհանուր կողմ ունեցող երկու քառակուսի, որոնց կողմի երկարությունը լինի 3 սմ:

7) Անկյունաքանոնի օգնությամբ անտող թղթի վրա գծիր ուշիկ անկյուն ունեցող եռանկյուն:

Այս խնդրի լուծման քայլաչափը (ալգորիթմը) կցինք.

ա) գծիր կամակոր MN ուղիղը.


բ) MN ուղիղի վրա վերցրո՛ւ A կամակոր կետը.

գ) անկյունաքանոնի օգնությամբ կատուցիր A գագաթով $\angle A$ ուղիղ անկյունը.

դ) AE և AN կողմերի վրա վերցրո՛ւ կամայական B և C կետեր.

ե) քանոնով միացրո՛ւ B և C կետերը.


զ) ստացված CAB եռանկյան A անկյունն ուղիղ է:




Աշակերտների մեջ առանց քայլում այն խնդիրները որ պատկերում առանձնացնել և լուծակ




անվանիր այն պատկերները անկյունը ստորիկուց հետև: Գծ խնդիր: Դիտիր գծագիրը և արտ անվանումներ:




ատարել
 են երկ-
 րանք,
 (որո՞հի)
 աները
 անի օգ-
 րուցում
 աները
 է կա-




Աշակերտների մեջ առանձնակի հետաքրքրություն են առաջացնում այն խնդիրները, որոնցում պահանջվում է տրոհված պատկերում առանձնացնել այս կամ այն պատկերները: Այսպես օրինակ




Անվանի՜ր այն պատկերները, որոնք ստացվել են ABCD քառակույնը տրոհելուց հետո: Չրի՜ր եռանկյունների անվանումները:
Խնդիր: Դիտի՜ր գծագիրը և զրի՜ր AB կողմով բոլոր եռանկյունների անվանումները:



Խնդիր: Տրված պատկերի երկու գագաթները միացրու իրար անկախ, որ ստանաս մեկ քառանկյուն և մեկ եռանկյուն: Քննարկի հնարավոր տարրերակները:




Խնդիր: Անվանիր և գիրի A գագաթ ունեցող բազմանկյունների անվանումները:



Խնդիր: Գծիր 4 սմ երկարություն ունեցող կողմով քառակուսի: Տար անկյունագծերը և անվանիր ու գիրի ստացած եռանկյունները: Երկրաչափական կյուբի ուսուցման ժամանակ պետք է լուրջ ուշադրություն դարձնել հաշվողական խնդիրներին, քանի որ դրանց լուծման համար բացի չափումներ կատարելուց պետք է կատարել մասնավորապես գործողություններ: Այդպիսի խնդիրների միջոցով է իրականացվում բվարանական և երկրաչափական կյուբերի կապը:

1) Չափել և գտնել տրված երկու հատվածների երկարությունները:

2) Գաղտնի տրված բնկալ գծի երկարությունը:



3) Չափել հատվածների երկարությունը:

4) Չափել կողմերի երկարությունները (քառանկյան) պարագիծը:

5) Գտնել եռանկյան կողմի երկարությունների երկարությունները՝ 47 սմ և 53 սմ:

6) Գտնել ուղղանկյան պարագիծը, եթե մեկ կողմն է 34 սմ և 2 դժ 3 սմ:

7) Գտնել քառակուսու պարագիծը, եթե կողմն է 6 սմ:


8) Գտնել քառակուսու կողմի երկարությունը 24 սմ է:

9) Գտնել ուղղանկյան կողմի երկարությունը 12 սմ է, իսկ պարագիծը՝ 40 սմ:


10) Գտնել ուղղանկյան մակերեսը, որի կողմն է 7 սմ և 5 սմ:

11) Գտնել ուղղանկյան կողմի երկարությունը 8 սմ է, իսկ մակերեսը՝ 96 սմ² (ուղղանկյան մակերես): Եթե օգտվենք կախման բանաձևից՝ $S = a \cdot b$, որտեղ $a=8$

հարկ
հանարկի



3) Չափել հաստվածների երկարությունները և գտնել բեկյալ գծի երկարությունը.



4) Չափել կողմերի երկարությունները և գտնել տրված եռանկյան (քառանկյան) պարագիծը:

5) Գտնել եռանկյան կողմի երկարությունը, եթե հայտնի են մյուս կողմերի երկարությունները՝ 47 սմ և 53 սմ ու պարագիծը՝ 1 մ 36 սմ:

6) Գտնել ուղղանկյան պարագիծը, եթե կողմերի երկարություններն են 34 սմ և 2 դմ 3 սմ:

7) Գտնել քառակուսու պարագիծը, որի կողմի երկարությունը 8 սմ է:

8) Գտնել քառակուսու կողմի երկարությունը, եթե պարագծի երկարությունը 24 սմ է:

9) Գտնել ուղղանկյան կողմի երկարությունը, եթե մյուս կողմի երկարությունը 12 սմ է, իսկ պարագիծը՝ 40 սմ:

Լուծում՝ 1) $12 \cdot 2 = 24$ (սմ), 2) $40 - 24 = 16$ (սմ), 3) $16 : 2 = 8$ (սմ)
Պատ.՝ 8 սմ:

10) Գտնել ուղղանկյան մակերեսը, որի կողմերի երկարություններն են 7 սմ և 5 սմ:

11) Գտնել ուղղանկյան կողմի երկարությունը, եթե կողմերից մեկի երկարությունը 8 սմ է, իսկ մակերեսը՝ 96 սմ²:

Պետք է մեկնաբանել, որ տրված են a -ն (ուղղանկյան մի կողմը) և S -ը (ուղղանկյան մակերեսը): Եթե օգտվենք ուղղանկյան մակերեսը հաշվելու բանաձևից՝ $S = a \cdot b$, որտեղ b -ն ուղղանկյան մյուս կող-

ների ան-

քառակուսու
ները:
որոշ ու-
նց լուծ-
ելու նաև
ի դրա-
նների


մի երկարությունն է, ապա կտրանանք՝ $96 = 8 \cdot b$: Անհայտ է ածադրելիք, որը գտնելու համար արտադրյալը պետք է բաժանել հայտնի արտադրիչի վրա՝ $b = 96 : 8 = 12$:

Պատ.՝ 12 սմ


Երբ աշակերտները յուրացնում են ուղղանկյան մակերեսը հաշվելու և հակադարձ խնդիրների լուծումը, նրանց պետք է առաջադրել խնդիրներ, որոնցում պահանջվում է գտնել տրված պատկերի մակերեսը ուղղանկյի (պալեսի օգնությամբ) կամ անուղղանկյի եղանակով:

Այսպես՝ հաշվել պատկերների մակերեսները.

ա)



բ)



հարելի է առաջադրել նման տեսակի պատկերները կատարել լայնանկյի կողմի խնդիրների լուծումը և արժանացան մեթոդով: Աշակերտները խնդիրներ, համեմատում են առաջադրված լուծումները և պնդում են իրենց լուծումները: Ուղղանկյան հոլանդական լուծումը՝ 32 մ: Այդ հոլանդական լուծումը բանադրանք: Քանի՞ քան լուծում բանադրանքը:

Խնդիր վերլուծության ժամանակ ընդհանրացված պատկերներով նույն մակերեսը մեզ հայտնի չէ:

$$S = a \cdot b, \quad a = 8$$

$$S = 80 : 32$$

Օգտվելով տրված թվի մասը մեր խնդիրներից պետք է գտնել հարկացված պատկերը՝ 2560 : 8 = 320

Գտնվում է, որ խնդիր հարկացված է հոլանդական լուծումով:

$$2560 - 960$$

Խնդիր: Ուղղանկյան հոլանդական լուծումը կազմում է երկարության հոլանդական լուծումը:

Խնդիր: Ուղղանկյան հոլանդական լուծումը՝ 48 մ: Երբ հոլանդական լուծումը լայնությունը՝ 6 մ-ով, ապա հոլանդական լուծումը:

Խնդիր: Ուղղանկյան կողմերի երկարությունները կողմերի երկարությունների և քանակության պարագրեթի միջև:

...այտ է ար-
... է բաժանել

... 12 սմ:

...երեսը հաշ-
... է առաջադ-
... պատկերի
...ակի եղա-

5սմ

Կարելի է առաջարկել նման տիպի խնդիրներ՝ պահանջելով, որ աշակերտները կատարեն չափումներ և գտնեն պատկերի մակերեսը: Այդպիսի խնդիրների լուծումը կարելի է իրականացնել համագործակցային մեթոդով: Աշակերտները, կատարելով չափումներ և հաշվումներ, համեմատում են ստացած արդյունքները: Հետագայում քննարկվում են ավելի բարդ խնդիրներ:

Խնդիր: Ուղղանկյունաձև հողամասի երկարությունը 80 մ է, իսկ լայնությունը՝ 32 մ: Այդ հողամասի մակերեսի $\frac{3}{8}$ -ն այգի է, իսկ մնացածը՝ բանջարանոց: Քանի՞ քառակուսի մետր մակերես է զբաղեցնում բանջարանոցը:

Խնդրի վերլուծության ժամանակ պարզվում է, որ խնդրի հարցին միանգամից պատասխան տալ հնարավոր չէ, քանի որ հողամասի մակերեսը մեզ հայտնի չէ: Նախ պետք է գտնել հողամասի մակերեսը.

$$S = a \cdot b, \quad a = 80 \text{ մ}, \quad b = 32 \text{ մ}$$

$$S = 80 \cdot 32 = 2560 \text{ (մ}^2\text{)}$$

Օգտվելով տրված թվի մասը գտնելու վերաբերյալ աշակերտների գիտելիքներից՝ պետք է գտնել, թե քանի քառակուսի մետր է հատկացված այգուն՝ $2560 : 8 \cdot 3 = 960 \text{ (մ}^2\text{)}$:

Պարզվում է, որ խնդրի հարցին պատասխան տալու համար պետք է հողամասի ընդհանուր մակերեսից հանել այգու զբաղեցրած մակերեսը.

$$2560 - 960 = 1600 \text{ (մ}^2\text{)}$$

Պատ. 1600մ²:

Խնդիր: Ուղղանկյունաձև հողամասի երկարությունը 400 մ է, իսկ լայնությունը կազմում է երկարության $\frac{2}{5}$ մասը: Ինչի՞ է հավասար այդ հողամասի ցանկապատի երկարությունը:

Խնդիր: Ուղղանկյունաձև հողամասի երկարությունը 54 մ է, իսկ լայնությունը՝ 48 մ: Եթե հողամասի երկարությունը փոքրացվի 4մ-ով, իսկ լայնությունը՝ 6 մ-ով, ապա ինչքանով կփոքրանա այդ հողամասի մակերեսը:

Խնդիր: Ուղղանկյան կողմերի երկարություններն են 5 սմ և 8 սմ, իսկ քառակուսու կողմի երկարությունը 4 սմ է: Հաշվել ուղղանկյան և քառակուսու պարագծերն ու մակերեսները, արդյունքները համեմատել:

§ 5. Ոչ ստանդարտ խնդիրներ

Պետք է նկատել, որ խնդիրների լուծումը մաթեմատիկայի ուսուցման հաստուկ ուղղություն է: Աշակերտները հաճախ խնդիրն ընկալում են տրված բվերի միջոցով և ոչ թե տրամաբանական հաջորդական դատողություններ կատարելով: Այդ է պատճառը, որ կրտսեր դպրոցականների մի զգալի մասը խնդիրներ լուծելիս թույլ է տալիս սխալներ:

Ձաղագսնող ուսուցման համատեքստում առանձնակի տեղ պետք է հատկացնել ոչ ստանդարտ խնդիրների լուծմանը:

Ոչ ստանդարտ խնդիրներ ասելով՝ մենք նկատի ունենք որոնողական, հետաքրքրաշարժ, կոմբինատորական և այլ խնդիրներ, որոնց լուծման համար մաթեմատիկայի տարրական դասընթացում ընդհանուր կանոններ չեն մշակվել, դրանց լուծման եղանակներն երեխաներին հայտնի չեն: Այդ խնդիրների քվանտալությունը երեխաներին չեն հուշում, թե ուսուցված կյուրերից ինչը պետք է օգտագործել սույնալ խնդիրը լուծելու համար:

Ոչ ստանդարտ խնդիրներն ուսումնական գործընթացում աշակերտների կողմից վարկածների առաջադրման և դրանց հարստացման կամ մխտման պայմաններ են ստեղծում: Այդպիսի խնդիրների լուծման համար պետք է ծգտել ուշադրությունը կենտրոնացնել զլխավորի վրա՝ այն առանձնացնելով ոչ հիմնականից: Դրա համար նախ պետք է խնդրի քվանտալությունն ընկալել անբողբոքյաճք, այնուհետև ուշադրություն դարձնել քաղաղրիների վրա և խնդիրը տրոհել մասերի, որը կօգնի գտնել խնդրի լուծումը: Պետք է նկատի ունենալ, որ որոշ աշակերտներ, չընկալելով խնդրի անբողջական քվանտալությունը, ուշադրություն են դարձնում նրա առանձին մասերի վրա:

Խնդիրը մասերի տրոհելուց և դրանց ուսումնասիրությունից հետո պետք է նորից այն դիտել անբողբոքյաճք, մասերը միավորելու ճանապարհով:

Սովորաբար ոչ ստանդարտ խնդիրների լուծման համար պահանջվում է կատարել առանձնահատուկ կոմբինացիաներ, որոնց ընտրելը քավականին դժվար գործ է:

Ոչ ստանդարտ խնդիրների լուծմանը նպաստում են այսպես կոչված կատակ-խնդիրների լուծումը: Օրինակ՝

1. Սազը 2 ուղի վրա կանգնած 2 այդ սազը, եթե կանգնի մեկ ուղի վրա՝ եվ մեկ, և՛ երկու ուղի վրա կանգնա՞նք: Ուրեմն նրա զանգվածը կա՞նք:

2. Տարվա ընթացքում ժամացույցն ինչ կարող է վիջանալ:

Այստեղ մտածելու քան չկա, ուղղա՞նք որ ամիսն ամենաքիչ օրն ունի և ամենա՞նիսը փետրվարն է: Ուրեմն ժամացույցը փետրվար անսին:

3. Մեկ մատիտն ունի 2 ծայր, երկուսն էլ կես մատիտը:

Մեկ մատիտի ծայրերի քանակը և կես մատիտը քանի ծայր ունի: Եթե մատիտները, որ կիսված մասերից յուրաքանչյուրն կես մատիտը նույնպես ունի 2 յի քանակը չի փոխվում, միայն այն կես մատիտն ունի 4 ծայր:

4. Դուք մի ինքնաթիռի օդաչու ե երևան՝ վայրէջք կատարելով Փարիս ինքնաթիռի օդաչուն:

Մտացին հալացքից աշակերտներ լուծում չունի, քանի որ իր մեջ կարծա՞նք: Սակայն եթե առաջին ընտրողը նորոշվում, կարողում ենք 2-րդ անգամ նր հրավիրելով տեքստին. «Ուշադրա՞նք խնդիր լսեք, ապա հեշտությամբ կտա Աշակերտներից ոմանք խնդրի ընթացականչում են:

- Ես եմ այն օդաչուն: Ես 7 տարեկան եմ:

5. Երկու գիտնականներ քաղաքում անկայն Սուրենը եղբայր չունի: Ունե՞ք Աշակերտները պետք է նկատել քույրերն են:

...իրոնք

...մարտնաստիկայի ու...
...հաճախ խնդիրն ըն...
...ամառանական հա...
...է պատճառը, որ
...ներ լուծելիս թույլ
...ատանձնակի տեղ
...ունենալը:
...ուրի ունենք որոնո...
...այ խնդիրներ, ո...
...նական դասընթացում
...ն ծղանակներն Ե...
...ախալությունը երե...
...այնք է օգտա...
...նքնաբացում աշա...
...և դրանց հարս...
...վրայիս խնդիր...
...նք կենտրոնաց...
...անից: Դրա հա...
...նայել ամբողջու...
...տիչների վրա և
...ունում: Դեռք է
...խնդրի ամբող...
...նում նրա ա...
...ությունից հե...
...նք միավորելու
...համար պա...
...րանք, որոնք
...նք են պայս

1. Սազը 2 ոտքի վրա կանգնած 2 կգ է: Քանի՞ կիլոգրամ կլինի այդ սազը, եթե կանգնի մեկ ոտքի վրա:
Եվ մեկ, և՛ երկու ոտքի վրա կանգնելիս սազը կշռում է միևնույն զանգվածը: Ուրեմն նրա զանգվածը կլինի նույնը, այսինքն՝ 2 կգ:
2. Տարվա ընթացքում ժամացույցն ամենաքիչը ո՞ր ամսվա օրերին կարող է փչանալ:
Կյստեղ մտածելու քան չկա, ուղղակի պետք է հիշել, թե տարվա որ ամիսն ամենաքիչ օրն ունի և պատասխանել հարցին: Իսկ այդ ամիսը փետրվարն է: Ուրեմն ժամացույցն ամենաքիչը կփչանա փետրվար ամսին:
3. Մեկ մատիտն ունի 2 ծայր, երկուսը՝ 4: Քանի՞ ծայր ունի մեկ ու կես մատիտը:
Մեկ մատիտի ծայրերի քանակը գիտենք: Մնում է իմանալ, թե կես մատիտը քանի ծայր ունի: Եթե մենք մատիտը սղոցով կիսենք, կտեսնենք, որ կիսված մասերից յուրաքանչյուրն ունի 2 ծայր, այսինքն՝ կես մատիտը նույնպես ունի 2 ծայր, մատիտը կիսելուց ծայրի քանակը չի փոխվում, միայն այն փոքրանում է: Ուրեմն՝ մեկ ու կես մատիտն ունի 4 ծայր:
4. Դուք մի ինքնաթիռի օդաչու եք, որ թռչում է Լուս Անցելեսից Երևան՝ վայրէջք կատարելով Փարիզում: Քանի՞ տարեկան է այդ ինքնաթիռի օդաչուն:
Առաջին հայացքից աշակերտներին կարող է թվալ, որ խնդիրը լուծում չունի, քանի որ իր մեջ կարծես թե տվյալներ չի պարունակում: Սակայն եթե առաջին ընթերցումից աշակերտները չեն կողմնորոշվում, կարողում ենք 2-րդ անգամ՝ աշակերտների ուշադրությունը հրավիրելով տեքստին, «Ուշադիր լսեք տեքստը: Եթե դուք ուշադիր լսեք, ապա հեշտությամբ կտաք խնդրի պատասխանը»:
Աշակերտներից ոմանք խնդրի ընթերցումից հետո անմիջապես բացալանում են.
- Ես եմ այն օդաչուն: Ես 7 տարեկան եմ:
5. Երկու գիտնականներ քայլում են իրենց ծղորդ՝ Սուրենի հետ, սակայն Սուրենը եղբայր չունի: Ովքե՞ր են քայլում Սուրենի հետ:
Աշակերտները պետք է նկատեն, որ գիտնականները Սուրենի քույրերն են:

6. Դուք մտնում եք մի կիսամուր սենյակ, որտեղ կա մոմ և կերտահի լամպ: Ի՞նչ կվառեք առաջին հերթին, եթե ձեր տուփում ընդամենը լուցկու մեկ հատիկ կա:

Այստեղ աշակերտները սկզբից ուշադրություն են դարձնում պայծառի առաջին մասին (մոմ և կերտահի լամպ) և ասում են, որ մոմն ավելի հեշտ կվառի: Սակայն ինչո՞ւ պետք է վառեն մոմը: Մոմը վառելու համար կրակ է անհրաժեշտ, այսինքն՝ նրանք առաջինը կվառեն լուցկու հատիկը: Նրանք մտածում են, որ պետք է ընտրեն մոմը կամ կերտահի լամպը և մոռանում են, որ դրանցից յուրաքանչյուրը վառելու համար լուցկի է անհրաժեշտ:

7. Տասիկը գառներ ու սագեր ունի: Մի օր նա նկատեց, որ նրանք մտել են քակ ու հաշվեց 3 գլուխ և 8 ոտը: Քանի՞ սագ ու գառ էին մտել քակ:

Նախ աշակերտներին հարցնել, թե քանի ոտը ունի սագը և քանի ոտը ունի գառը:

- Սագը ունի 2 ոտը, իսկ գառը՝ 4 ոտը:

- Հաշվի առնելով ոտքերի քանակը՝ քանի՞ գառ կարող է լինել քակում:

- 8 ոտը էր հաշվել տասիկը, իսկ գառն էլ ունի 4 ոտը, ուրեմն քակում կլինի 2 գառ:

- Էլ ի՞նչ տվյալներ ունենք խնդրում:

- Ղիտենք, որ տասիկը հաշվեց 3 գլուխ և 8 ոտը:

- Ուրեմն կարո՞ղ ենք իմանալ, թե քանի սագ ու գառ մտան քակ:

- Եթե ընդամենը 8 ոտը է, ուրեմն 2 գառ չի կարող լինել քակում, քանի որ տասիկը հաշվել է 8 ոտը և 3 գլուխ, իսկ այսպես կստացվի 8 ոտը և 2 գլուխ: Ուրեմն քակում կլինի ընդամենը 1 գառ՝ 4 ոտը և 1 գլուխ:

- Եթե քակում եղավ 1 գառ, քանի՞ սագ կլինի: Ի՞նչ տվյալներ մնացին:

- Ունենք 2 գլուխ և 4 ոտը, իսկ մենք զիտենք, որ սագերն ունեն 2 ոտը, ուրեմն քակում կլինի 2 սագ, այսինքն՝ տասիկը կհաշվի 2 գլուխ և 4 ոտը:

Փաստորեն քակում կար 1 գառ և 2 սագ:

Հաճախ լինում են առաջադրանքներ, որոնց պատասխանը աշակերտները սխալ են տալիս ոչ թե գիտելիք չունենալու, այլ ուշադիր չլսելու պատճառով: Այս երևույթը կանխելու համար ուսուցիչը

պետք է պահանջի, որ աշակերտները խնդրի քվանդակությունը:

Քերենք օրինակներ:

1. Մի մարդ սաղում է 9-րդ հարկում: 3 ժամից զնայիս իջնում է վերելակով, իսկ 4 կով քարծրանում մինչև 5-րդ հարկ, այնտեղ քարծրանում է ոտքով: Վերելակն անհասնում է նա այդպես վարվում:

Այդ մարդն այնքան կարճատևա՞ն էր, որ միայն 5-րդ հարկի կոճակին, իսկ եթե հարկի կոճակը, որն էլ ամենաներքևում էր, հասնում է մինչև այդ կոճակը:

2. Հայրը 40 տարեկան է: Տղան 10 ան տղան է հայրը:

Այս խնդիրը տրված է աշակերտներին համար: Հոր տարիքը խնդրում նշված է: Հայրը 40 տարեկան է:

3. Տղան 1 ժամում քոնեց 5 ծուկ: Քանի՞ ծուկ:

Այս խնդիրն չենք կարող հստակ պատասխանել: Եթե տղան 2 ժամում ոչ մի ծուկ չլսեց քանակությամբ ծուկ:

4. Սեղանին կար 10 խնձոր: Քաղի 7-րդ խնձորը մնաց սեղանին:

Այստեղ աշակերտներին շտապելու է հաճախ նրանք պատասխանում են, որ «քաղի 7-ից» պայմանը պետք է հուշի, որ մնաց կորել են 3 խնձոր և սեղանին մնաց 7 խնձոր:

5. Չնայած կազմված է 8 վագոններից՝ հաշված 4-րդ վագոնում, իսկ Տիգրանը՝ վագոնում: Ճի՞շտ է, որ Արմենն ու Տիգրանը թողնում են 8 վագոնները:

Չպատասխանելիս նկատելով վագոնների մեծ և Տիգրանի նստած վագոնները, եթե ուրեմն նույն վագոնում են, իսկ եթե ոչ՝ ոչ, ասում են:

պետք է պահանջի, որ աշակերտները ուշադիր լսեն, ընկալեն խնդրի բովանդակությունը:

Քերենք օրինակներ.

1. Մի մարդ ապրում է 9-րդ հարկում: Նա ամեն անգամ աշխատանքի գնալիս իջնում է վերելակով, իսկ վերադառնալիս՝ վերելակով բարձրանում մինչև 5-րդ հարկ, այնուհետև մինչև 9-րդ հարկ բարձրանում է ոտքով: Վերելակն անխափան աշխատում է, տակայն ինչո՞ւ է նա այդպես վարվում:

Այդ մարդն այնքան կարճաժամակ էր, որ նրա ձեռքը հասնում էր միայն 5-րդ հարկի կոճակին, իսկ իջնելիս նա սեղմում է 1-ին հարկի կոճակը, որն էլ ամենաներքևում է գտնվում: Նրա ձեռքը հասնում է մինչև այդ կոճակը:

2. Հայրը 40 տարեկան է: Տղան 10 անգամ փոքր է: Քանի՞ տարեկան է հայրը:

Այս խնդիրը տրված է աշակերտներին ուշադրությունը գրավելու համար: Հոր տարիքը խնդրում նշված է: Հայրը 40 տարեկան է:

3. Տղան 1 ժամում բռնեց 5 ձուկ: Քանի՞ ձուկ կբռնի նա 2 ժամում:

Այս խնդրին չենք կարող հստակ պատասխանել, քանի որ հնարավոր է տղան 2 ժամում ոչ մի ձուկ չբռնի կամ բռնի ցանկացած քանակությամբ ձուկ:


4. Սեղանին կար 10 խնձոր: Բացի 7-ից բոլորը կերան: Քանի՞ խնձոր մնաց սեղանին:

Այստեղ աշակերտներին շփոթեցնում է «բացի 7-ից» տվյալը և հաճախ նրանք պատասխանում են, որ մնաց 3 խնձոր: Սակայն «բացի 7-ից» պայմանը պետք է հուշի, որ 7 խնձորը մնացել է, այսինքն կերել են 3 խնձոր և սեղանին մնացել է 7 խնձոր:

5. Չնայած կազմված է 8 վագոնից: Արմենը նստած է սկզբից հաշված 4-րդ վագոնում, իսկ Տիգրանը՝ վերջից հաշված 4-րդ վագոնում: Ճի՞շտ է, որ Արմենն ու Տիգրանը միևնույն վագոնում են:

Գրատախտակին նկարենք վագոնները և հաշվենք ու նշենք Արմենի և Տիգրանի նստած վագոնները: Եթե նշվածները համընկնեն, ուրեմն նույն վագոնում են, իսկ եթե ոչ՝ ուրեմն տարբեր վագոններում են:

Արձեւն Տիգրան



I II III IV V VI VII VIII
 1. Այսպիսիք ենք ունենում 8, որ նրանք նստած են տարբեր վագոններում:
 6. Պետական ծուկ էին որսում 2 հայր և 2 որդի: Քանզի ձկներից
 3-ը եղիցին, և նրանցից յուրաքանչյուրը մեկ ծուկ կերակ: Ինչպե՞ս -
 պատահեց:

- Ի՞նչն է մեզ հայտնի:
- Եղիք են 3 ծուկ, նրանցից յուրաքանչյուրը մեկ ծուկ կերակ:
- Ի՞նչ կարող ենք իմանալ այս տվյալներով:
- Կարող ենք իմանալ, թե քանի մարդ ծուկ կերակ:
- Ինչպե՞ս:
- Եթե եղիք են 3 ծուկ և մարդկանցից յուրաքանչյուրը կերել է
 մեկ ծուկ, ուրեմն կար 3 մարդ:
- Անվաղի խնդրում ասվում է, որ ծուկը որսում էին 2 հայր և 2 որ-
 դի: Ինչպե՞ս բացատրենք:
- Մենք գիտենք, որ 3 մարդ է ծուկ կերել: Ուրեմն այդ ծուկ որսա-
 ցողները պապն էր, իր որդին և քույրը:

7. Եծնքի յուրաքանչյուր հարկի բարձրությունը 4 մետր է: Այդ
 շենքի երրորդ հարկի հատակին փոխված գորգը գետնից ի՞նչ բարձ-
 րության վրա է գտնվում:
 Այս խնդրին պատասխանելու համար պետք է կատարել
 հետևյալ դասողությունը. եթե գորգը փոխված է երրորդ հարկի հա-
 տակին, ուրեմն նրա բարձրությունը գետնից կլինի այնքան, ինչքան
 երրորդ հարկի բարձրությունը. քանի որ երկրորդ հարկի տանիքը
 համապատասխանում է երրորդ հարկի հատակին: Այս դասողույ-
 թյունից եզրակացնում ենք, որ գորգի բարձրությունը գետնից կլինի 8
 մետր:

8. Արախիլը սկսեց լուծել հանձնարարված խնդիրները, որոնց
 առաջին համարը 7-ն էր: Եւ հերթականությամբ լուծեց քոլոր
 խնդիրները: Քանի՞ խնդիր լուծեց Արախիլը, եթե վերջին համարը
 29-ն էր:

Եւսիս հաշվելու միջոցով լուծե-
 րանքը) պարզեց. որ Եւսիսը
 նախ խնդիրները ընտրվելով
 միջև եղած բվերի քանակը) համ-
 բվերի քանակը (ներառյալ աստ-
 պետք չէ հաշվել քոլոր բվերը, և
 փորք բվի նախորդ թիվը:

9. Հայր և տղա 8 կտոր փա-
 կորեցին նրանցից յուրաքանչյուրը
 Պետք է ընտրվել տարբեր
 որդին կտրեն հավասար քանակ-
 քանցյուրը 4 կտոր: Հնարավոր է
 քան որդին և ընդհանրապես՝ զե-
 յուսակով:

Հայր	7	8	9
Որդի	1	2	3

Ջարգացնող ուսուցում ապահե-
 մուսկոր գործունեության մեջ հետ-
 լու նպատակով տարրական դասա-
 լակի դասադրեցում գետնից բ-
 ասջադրանքներ, խնդիրներ: Այդպիսի
 է ընտրվել ոչ միայն դասերի ընթաց-
 նական, խմբակային պարապմունք-
 խնդիրներ հանձնարարել տանը կա-
 աշակերտներն սկսում են մտածել,
 թե նրանք զգում և ձգտում են ուժ-
 աներաժեշտություն:

Օրինակ 1) Կեսիլի օրինակած
 1, 2, 3, 5, 8, ...
 Ուշադրություն դարձնելով տղան
 յուրաքանչյուր թիվ, սկսած երրորդից
 գումարն է. 3 = 2 + 1, 5 = 2 + 3
 5 + 8 = 13, մյուսը՝ 8 + 13 = 21, վերջի-
 308

Նախ հաշվելու միջոցով (հաշվելով 7-ից 29-ի միջև եղած բվերի քանակը) պարզենք, որ կոպիկը լուծեց 23 խնդիր: Հետո նմանորինակ խնդիրներ քննարկելով (որտեղ պահանջվում է գտնել 2 բվերի միջև եղած բվերի քանակը) համոզվել, որ երկու բվերի միջև եղած բվերի քանակը (ներառյալ առաջինը և վերջինը) հաշվելու համար պետք չէ հաշվել բոլոր բվերը, այլ անհրաժեշտ է մեծ բվից հանել վոդր բվի նախորդ քիվը:

9. Հայր և տղա 8 կտոր փայտ կտրեցին: Քանի՞ կտոր փայտ կտրեցին նրանցից յուրաքանչյուրը:

Պետք է քննարկել տարբեր դեպքեր: Հնարավոր է, որ հայրն ու որդին կտրեն հավասար քանակությամբ փայտ, այսինքն՝ յուրաքանչյուրը 4 կտոր: Հնարավոր է նաև, որ հայրն ալելի շատ կտրի, քան որդին և ընդհակառակը: Հնարավոր դեպքերը ցույց տանք աղյուսակով.

Հայր	7	6	5	4	3	2	1
Որդի	1	2	3	4	5	6	7

Ձախցանոց ուսուցում ապահովելու, կրտսեր դպրոցականների մտավոր գործունեության մեջ հետազոտական տարրեր ներմուծելու նպատակով տարրական դասարաններում գործող մաթեմատիկայի դասազրգեբում զետեղված են նաև դրոնողական քնույթի առաջադրանքներ, խնդիրներ: Այդպիսի խնդիրների լուծումը կարելի է քննարկել ոչ միայն դասերի ընթացքում, այլ նաև արտադասարանական, խմբակային պարապմունքների ժամանակ: Կարելի է որոշ խնդիրներ հանձնարարել տանը կատարելու համար: Հայտնի է, որ աշակերտներն սկսում են մտածել, դասողություններ կատարել, եթե նրանք զգում և ծգտում են դժվարություններն հաղթահարելու անհրաժեշտություն:

Օրինակ 1) Կասկի՞ր օրինաչափությունը և գտիր նա 3 քիվ:

1, 2, 3, 5, 8, ...

Ուշադրություն դարձնելով տրված բվերին՝ պետք է նկատել, որ յուրաքանչյուր քիվ, սկսած երրորդից, իրեն նախորդող երկու բվերի գումարն է. $3 = 2 + 1$, $5 = 2 + 3$, $8 = 3 + 5$, հաջորդը կլինի $5 + 8 = 13$, մյուսը՝ $8 + 13 = 21$, վերջինը՝ $13 + 21 = 34$:

2) Կռահիր օրինաչափությունը և շարունակիր մինչև 21-ը:

3, 6, 9, ...

3) Կռահիր օրինաչափությունը և գրիր եւ երկու թիվ:

24, 19, 14, ...

Ոչ ստանդարտ խնդիրները լուծելիս դժվարություններն հաղթահարելու նպատակով կարելի է դրանք տրոհել, ձևափոխել ավելի պարզ խնդիրների, որոնց լուծումը աշակերտները հեշտությամբ կարող են յուրացնել:

Խնդիր: Արտարուստ իրարից չտարբերվող 9 ախեսներից մեկը թեթև է մյուսներից: Առանց կշռաքարերի օգտագործման, նժարավոր կշեռքով երկու կշեռմանը ինչպե՞ս հայտնաբերել թեթև ախեսն:


Այս խնդրի լուծման համար կարելի է այն ձևափոխել այսպես: 9 ախեսն փոխարինել 3 ախեսով «երկու կշեռմանը»՝ «մեկ կշեռմով»:

Պարզ է, որ երեք ախեսներից մեկը պետք է դնել նժարներից մեկի վրա, երկրորդը՝ մյուս նժարին: Եթե նժարները հավասարակշռվեցին, ապա թեթև ախեսն այն է, որը դրված չէ նժարի վրա, իսկ եթե չհավասարակշռվեցին, ապա թեթևը նժարի վրա է:

Այնուհետև կարելի է քննարկել նախորդ խնդրի լուծումը՝ հաշվի առնելով, որ 9 ախեսն կարելի է տրոհել երեք խմբի, յուրաքանչյուրում 3 ախես և կատարել կշեռումներ: Առաջին անգամ յուրաքանչյուր նժարին դնելով երեքական ախես: Եթե նժարները հավասարակշռվեցին, ապա թեթև ախեսն մնացած երեքի մեջ է, իսկ եթե չհավասարակշռվեցին, ապա թեթև ախեսն նժարի վրա գտնվող երեք ախեսներից մեկն է: Իսկ երեքից թեթևի գտնելու ազդրիթմն երեքասներն արդեն գիտեն: Այս խնդիրների լուծումը յուրացնելուց հետո կարելի է ավելի բարդ խնդիր առաջադրել: Որպես համար տրված խնդրում 9-ը կարելի է փոխարինել 27-ով և պահանջել, որ 3 կշեռմանը հայտնաբերեն թեթև ախեսն: Պարզ է, որ 27 ախեսն պետք է տրոհել 3 խմբի, յուրաքանչյուրում 9 ախես և կատարել համապատասխան դաստիարակություններ:

Տարրական դասարաններում ներկայումս զործող մաթեմատիկայի դասագրքերում (Ինդինակներ՝ Ս. Մկրտչյան, Ա. Արրախմյան, Ս. Իսկանդարյան) կան հետևյալ բովանդակությամբ բազմաթիվ առաջադրանքներ.

Կռահիր օրինաչափությունը և լրացրո՛ւ դաստարել վանդակները.



Պետք է մեկնաբանել. 5-ին «նախ» ստացվի 9 ($5 + 4 = 9$): Ուրեմն 5-ը նախ պետք է գրել 4: Այնուհետև գումարել՝ տարել վանդակում գրել 11: ($9 + 11 = 20$)

Նման դաստիարակություններ կարելի է դնար: Որտարել վանդակում չգրված հանման գործողություն կատարելիս: $13 - 7 = 6$, $20 - 8 = 12$


Ձարգացող ուսուցման արդյունավետ կարևոր գործոն է հանդիսանում առաջ դաստիարակությունը: Այդ իմաստով առանձնաշատն այն խնդիրներն, որոնք ունեն մեծ խնդիրներն աշակերտներին հնարավորություն տալու լուծումներ:

Խնդիր: Բանի՞ յուր նախը կարելի է նաև միայն 4 և 9 յուրանոց մեկական և կրկուց ճիշտ հասկանալու դեպքում էլ կեն թող որ հնարավոր տարբերակները:

1) 1 | վերցնելու համար 9 յուրանոց 4-ը կցնեմ 4 յուրանոց ամանում և մնաց 9 յուրանոցում մնացած 5 յուրանոց ամանում: 9 յուրանոց ամանում կցնեմ 9 յուրանոց ամանում կցնեմ:

2) 3 | նախը վերցնելու համար 9 յուրանոց ամանը և դաստիարակում 3 յուրանոց անգամ՝ լցնում ենք 4 յուրանոց աման յուրանոց ամանում: 4 յուրանոց ամանում և դաստիարակում 4 յուրանոց ամանում:

3) 2 | նախը վերցնելու համար նախ յուր դեպք, որը կցնեմք 9 | ամանում և դաստիարակեմք 9 | ամանում. որտեղ



Պետք է մեկնաբանել, 5-ին ո՞ր թիվը պետք է գումարել, որ ստացվի 9 ($5 + 4 = 9$): Ուրեմն 5-ի հարևան դասարկ վանդակում պետք է գրել 4: Այնուհետև գումարել՝ $4 + 7 = 11$, և 9-ի հարևան դասարկ վանդակում գրել 11; ($9 + 11 = 20$):

Նման դասողություններ կարելի է կատարել նաև բ) դեպքի համար: Դասարկ վանդակում յգրված թվերը կարելի է գտնել նաև հանման գործողություն կատարելիս: Այսպես՝ $9 - 5 = 4$, $20 - 9 = 11$, բ) դեպքի համար, $13 - 7 = 6$, $20 - 8 = 12$, $28 - 13 = 15$, $63 - 28 = 35$:

Զարգացող ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու կարևոր գործոն է հանդիսանում առաջադրվող խնդիրների բովանդակությունը: Այդ իմաստով առանձնակի հետաքրքրության են արժանի այն խնդիրներն, որոնք ունեն մի քանի լուծումներ: Այդպիսի խնդիրներն աշակերտներին հնարավորություն են տալիս մտածելու, որոնելու տարբեր լուծումներ:

